

ՇԱԲԱԹԱԹԵԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ. Քանի մը խորհրդածուծիւններ Հայոց հողային գրութեան վրայ Բ. Ք.
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ. Լորտ Նորթ-պրուք, Լորտ Սէլպորն, Սըր Չարլս Տելք, Պ. Չամբ
պըրէյն, Լորտ Տէրպի, Էսլըն, Էսլըն Ե. 2.
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. Առ կոյն ապաքինեալ..... Ե. 2.
ԶԱՆԱԶԱՆՔ. Մարդակեր ծառը..... * * *
ՆՈՐԱՎԷՊ. Կատակ մը..... * * *
ՔԱՂՈՒԱԾ ՇԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Աքտաքին, Ներքին, Ազգային.....
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻՏ ՏՂ ՄՕՆԹԷԲԷՆ) Թարգմ..... Մ. 20 ՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս եւ գաւառներու — տարեկան..... Կէս ոսկի Օսման.
» » վեցամսեայ..... Քառ » »
Մէկ թերթին գինն է 60 փարայ
Օտար քաղաքաց համար տարեկան..... 12 ֆրանք
» » վեցամսեայ..... 6 »
Թղթատարութեան ծախք տարեկան..... Դան. արծ. 15
վեցամսեայ » » 7 1/2


Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է
ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք եւ Մասիս Լրագրաց
Ղալաթիա, Նորասուկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1884



ԴՐԱՄԱԿԱՆ ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 7-րդ կետմբեր

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

ամիս Լոնտրայի վրայ (պանքային)	110
3 » » » (վճարներ)	109 3/8
3 » Բարեկի » (պանքային)	22 92 1/2
» » » » (վճարներ)	23

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂՈՅ

Օսմանեան Գոնսոյիտե

Երեկ երեկոյ գոցուեցաւ.....	ԳՏԿն.....	—
Պորսային գոցուեցին վերջը	» ...	—
Բերայի մէջ	» ...	8 37 1/2
Առաւօտուէն բացուեցաւ	» ...	8 38
Բարձրագոյն գին	» ...	8 38
Նուազագոյն	» ...	8 37 1/2
Կէս օրին	» ...	8 38
Իւնիֆիէ Եփրատական (Գ. Կ.).....	—	—
Երեկ երեկոյն գոցուեցաւ	—	—
Բերայի մէջ	—	—
Այս առտու բացուեցաւ Գ. Կ.	70 25	
Կէս օրին	70 30	
Հէվալէսիզ	70 30	
Բէքօր գոնսոյիտէի.....	—	—
» Իւնիֆիէի	—	—
Փոխառութիւն 1863	Ֆր. ...	72
» 1865	» ...	56 75
» 1869	» ...	50
» 1873	» ...	44 25
Պոն տիւ Թրէզօր	Անգլ. Լ.ր.	20 50
Բոլմէլի երկաթուղի	Ֆր. ...	43 75
Օպիկտսիոն տը Բրիտիթ	»	380
Բաժնեթուղթ Լաւրիօմի	»	67

ԲԱԺՆԵՏՈՐՈՒՔ

Սօսիթէ Ժէնէրալ.....	Անգլ. Լ.ր.	3 28
Բրէտի Ժէնէրալ (Գ. Կ.) ...	Օսմ. Լ.ր.	7 6
Պանք տը Գոնս.....	» ...	5 25
Սոս. Շանտ է վալէօր	Օսմ. Լ.ր.	3 25
Թրամուէյ.....	» » ...	285

Ընթացք դրամս

Օսմանեան ոսկի	դր. ...	100
20 Ֆրանքնոց	» ...	88 2
Անգլիական ոսկի	» ...	110 22
Բօլ Իմբէրիալ	» ...	89 35
Բրիտից	» ...	51 20
Ուսլի Թիթագրամ	» ...	8 72
» արծաթ	» ...	89 30
Ֆիօրին	» ...	9 4
Մէճ. արծ. (տարբ.).....	» ...	108 3
Վէցնոց	» ...	102 35
Հինգնոց	» ...	102 35
Մէթալիք	» ...	99 20
Պղինձ	» ...	780
Թիթագրամ	» ...	3200

ԵՆՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 18 Դեկտեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ	
Անգլ. քոնսոյիտէ գոցուեցաւ	99 11 1/16
Օսմ. բացուեցաւ	8 1 1/16
» » գոցուեցաւ	8 1 1/8
Օսմ. փոխառութիւն 1865	11 1 1/4
» » 1869	10
» » 1871	69
» » 1872	19 1 1/4
» » 1873	8 7 1/8
Փոխառութիւն 1877	82
Պանք Օթօման	13 3 1/8
Ռուսական փոխառ. 73 (գ. 4.)	95 1 1/8
Եփրատական միացեալ (Իւնիֆիէ)	63 7 1/8
» առանձն. (Բրիտիլէթիէ)	88
Տայրա Սանիէ	62 3 1/8
Տօմանիալ (փոխառ. Բօչիլա)	88
Հոնգարական պարտաթուղթ 1877.....	—
Փոխառութիւն Բարիզի վրայ	—

Վիեննա, 18 Դեկտեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխառութիւն Լոնտոնի վրայ	123 75
Օսմանեան երկաթուղի	21 60

Բարիզ, 18 Դեկտեմբ. ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0.....բաց	108 77 1/2
» » 3 0/0.....բաց	78 40
Օսմանեան քոնսոյիտէ բացուեցաւ	8 22 1/2
» » գոցու. (գ. 4.)	8 25
» » 1865	57
» » 1869	49
» » 1873	44

Օսմանեան երկաթուղի	45 25
» Բէթի բաժնեթուղթ.....	513 75
Պանք Օթօման	593 75
Գրէտի Լիօնէ	528 75
» Ֆօնսիէ.....	1327 50
Բաժնետոմս Լիօնի (գոթ. կտր.).....	1232 50
Սուէզի ջրանցք	1851 25
Ռուսական 5 0/0 1877ի.....	100 1 1/2
Իտալական Ռանթ	98 50
Եփրատական միացեալ գոց	323 75
Սպանիական (տրտաքին).....	60 1 1/4
Բրիտիթ Թիւրք.....	387 50
5 0/0 Հելլենական	355
Զէք Լոնտրայի վրայ	25 31

ԲԱՐԻԶ ԲԵՏԻԹ ՊՈՐՍԱ

Դեկտեմբեր 18 ժ. 10, վ. 45

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0.....	108 73 3/4
Օսմանեան »	8 20
Եփրատական միացեալ.....	323 75

Մ Ա Ս Ի Ս

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33 րդ ՏԱՐԻ

1884 ԴԵԿՏԵՄԲԵՐ 8

ԹԻՒ 3747

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՐՀՐԴԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՈՅ ՀՈՂԱՅԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Հողային կամ կալուածական գրութիւն ըսելով կ'իմանանք ամբողջութիւնն այն պայմաններու որովք երկրի մը հողագործները կը մշակեն նոյն երկրի հողերն, իբրեւ իրենց սեփականութիւն, այսինքն իբրեւ հողատէր կամ իբրեւ վարձակալ հողատիրոջ մը արտերուն . և կամ, վերջապէս, իբրեւ մշակ, այսինքն հասարակ բանւոր, ուրիշ մը հոգին վրայ :

Երբեմն կ'ըսուի թէ Հայք, այսինքն Հայոց մեծամասնութիւնն, հողագործ ժողովուրդ մ'են : Ուրիշ անգամ նոյնչափ հաւատեօք կ'ըսուի թէ Հայք վաճառական ժողովուրդ մ'են, և առաւելագոյն այս երկրորդ հանգամանքով է որ օտարազգիք կը ճանչեն Հայերն, և յօժարակամ կը նմանցունեն զանոնք Հրէից, որք հողագործ չեն բնաւ : Այս կարծեաց ո՞րն ստոյգ է : Ուրիշ եղանակաւ մը առաջարկելով նոյն խնդիր, քաղաքաբնակ Հայերն աւելի բազմաթիւ են թէ գիւղաբնակ Հայերն : Այս հարցման ստոյգ պատասխան մը չի կրնար տրուիլ . որովհետեւ թիւեր կը պակսին ընդհանրապէս : Ժամանակ մը մեծ փութով կը մշակուէր վիճակագրական խնդիր մը : Շատ կատարաբէշ էջեր նուիրուեցան այս խնդրոյ լուսաւորման : Բայց ազգային իշխանութիւնը տակաւին այսօր ճիշդ և ամփոփ հաշիւ մը չունի զանազան երկիրներու Հայոց բազմամարդութեան և զբաղմանց տեսակին

վրայ : Առաւելագոյն երկրի մը մէկ մասը միայն առարկայ էր այդ առաջին քննութեանց, և այս ալ բնակչաց թիւը միայն խմանալու համար էր : Ստուգիւ չատ օգտակար գործ մը կը լինէր եթէ այս աշխատութիւն չարունակուէր առաւել կանոնաւոր և առաւել ընդարձակ հիման վրայ : — Մեք կը կարծենք թէ գիւղաբնակ Հայերը քաղաքաբնակ Հայոցմէ շատ աւելի են . զի, նախ, ժողովրդեան մեծամասնութիւնը տակաւին կը բնակի օսմանեան և ռուսական Հայաստանի գաւառաց մէջ, և այս գաւառներու հայ բնակչաց ստուար մեծամասնութիւնը գիւղաբնակ է : Երկրորդ, թէեւ ամբողջ գտնութեանութիւնը քաղաքաբնակ են, բայց վերոյիշեալ գաւառներու սահմաններէն դուրս ալ շատ տեղեր Հայք նոյնչափ քաղաքաբնակ են որչափ գիւղաբնակ . ինչպէս Փոքուն Ասիոյ գաւառաց մէջ : Ուրեմն, ամբողջութեան մէջ, գիւղաբնակներն աւելի պարտին լինել : Հետեւեալէս, Հայոց երկրագործ մասն ինքնին առաւել ստուարաթիւ պէտք է լինի քան վաճառական, խանութպան, արհեստաւոր, և այլ քաղաքացի դասերն ի միասին աւելալ :

Արդ, ըստ մեզ յոյժ կարեւոր խնդիր մ'է թէ, մեր ազգին այս երկրագործ մեծամասնութիւնն ինչ տեսակ հողային գրութեան մը ներքեւ կ'աշխատի : Հայ երկրագործք հողատէ՞ր են, վարձակալ են, թէ պարզ մշակներ են : Հայաբնակ գաւառները շատ մը տեսութեամբք քննուած են . բայց որչափ մեք գիտենք, այս տնտեսական տեսութեամբ չեն քննուած ձեռնհաս սնձերու կողմէ, կամ գէթ այդպիսի քննութեան մը արդիւնքը լոյս չէ տեսած : Դեռ այս օրերս հրատարակեցան երկու ընտիր աշխատութիւններ հայաբնակ գաւառները նկարա-

գրող . Գեր . Տ . Սրբանձտեանց վարդապետի Համօ Հոփօն օտմանեան Հայաստանի գաւառաց վրայ , և Պ . Յ . Ալլահփէրտեանի Ունէա Կաճ Զեյթուն գրքոյկը Ալիիկիոյ գլխաւոր կեդրոնին վրայ : Այս և նոյն կարգի աշխատութիւնը որ յառաջագոյն լոյս տեսած են , մեզ կը բերեն ստուգիւ շատ կարեւոր տեղեկութիւններ , հնախօսական , բանասիրական , վիճակագրական , եւ . բայց սակաւին փափաքելի էր անոնց մէջ տեսնել մէն մի գաւառի Հայոց հոգային դրոշմեան պայմանաց ամբողջ նկարագրութիւն մը , որ կը պակասի , զի հետազոտութեան այս ճիւղին ճաշակը չէ զարգացած մեր մէջ :

Հայոց հոգային դրութիւնը քննելու համար պէտք է առաւելապէս մեր տեսութեան առարկայ ընենք այն գաւառներու Հայերն ուր մեր ազգայնոց ստուար մեծամասնութիւնն հողագործ է : Ուստի , նախապէս քանի մը զիտողութիւններ ունինք ներկայացնելու թուրքիոյ և Ռուսիոյ հայաբնակ գաւառաց երկրագործ ժողովրդեան դրութեան վրայ : Այս բացատրութեամբ կ'իմանանք , օրինակի համար , Կարնոյ , Վանայ , Բաղէի , Մշոյ , Տէրսիմի , Տիարպէքիի , Երեւանայ , Գարապաղի գաւառաց երկրագործ Հայերը : Գաւառէի և Գարապաղի պարսկական գաւառաց սակաւութիւն Հայերն եւս հոգային դրութեան սկզբանց կողմէ աղոնց վիճակակից կրնանք համարել :

Արդ , բոլոր այս գաւառաց մէջ , վարչային դրութեան պահպանութեանց հակառակ , անտեսական միօրինակ երեւոյթ մը մեր աչքին կը զարնէ : Այս է՝ աւափական կառավարութիւնը : Պէյերը , Խաները , Շէյխերն և Մէլիքները մի և նոյն դրութեան ներկայացուցիչներն են : Այս դրութիւն ունի թէ՛ քաղաքական և թէ՛ անտեսական նշանակութիւն մը : Մեր աստ կը քննենք առնուտեսական կողմը միայն : Հողերուն մեծագոյն մասը կը տեսնենք սեփականութիւն այդ մեծ կալուածատեարց , որք ի վարձատրութիւն վնասորական քաջագործութեանց , կամ աշխարհակալութեան իրաւամբ , և կամ սլարդ յափշտակութեամբ ձեռք բերած են ընդարձակ հողեր : Այս մասին վերոյիշեալ գաւառաց երկրագործ բնակիչք բացառիկ կացութեան մը մէջ չեն դառնուիր . զի ուրիշ երկիրներու մէջ ալ , ուր քաղաքական

պայմանք յառաջ բերած են աւատապետական իշխանութիւն մը , կալուածատիրութիւնն եւս նմանօրինակ պայմաններու ենթարկուած կը գտնենք : Հեռաւոր երկրի մը մէջ , յիշանալ , կը տեսնենք որ բրիտանական արշաւանքն հաստատած է անգլիացի աւատապետ-կալուածատէրներու կարգ մը , որոց սեփականութիւն եղած են կղզւոյն հողերուն մեծագոյն մասը : Նոյն վիճակ գոյութիւն ունի նաեւ Հունգարիոյ մէջ , ուր կայ դեռ զօրաւոր ազնուականութիւն մը , և զոյոթութիւն ունէր Ռուսիոյ եւրոպական մասին մէջ , երբ Ալեքսանտր Բ . չէր ջնջած տակաւին սարկային դրութիւնն և մեծ կալուածատեարց հողերը զիւրացուց բաժնող հրամանագիրը չէր հանած : Վերջապէս , նոյն վիճակ կար նաեւ ի Ֆրանսա մեծ յեղափոխութենէն առաջ : Ուրեմն , աւատական կալուածատիրութիւնն հոգային դրութեան մէջ որոշ վիճակ մ'է , և այս կացութեան մէջ կը գտնենք վերեւ յիշուած գաւառաց հողերուն մէկ մեծ մասը :

Տնտեսագիտաց մէջ շատ յուզուած խընդիր մ'է թէ , մեծ կալուածատիրութիւնն ի՞նչ հետեւանք կ'ունենայ երկրի մը մէջ հողագործութեան արդիւնաւորման և զարգացման տեսութեամբ : Մեծ կալուածատիրութեան հանդէպ յոյժ Զատագովեալ դրութիւն մ'է փոքր կալուածատիրութիւնն , որ միւսին ճշդիւ հակառակն է : Մեծ կալուածոց մէջ բազմաթիւ մշակներ կ'աշխատին ի հաշիւ Պէյի մը , այն է կալուածատիրոջ : Մեր յիշած գաւառներուն մէջ , հողագործաց ըստուարութիւն մաս մը այս վիճակն ունի : Ուրիշ մաս մը փոքր ինչ տարբեր վիճակի մէջ է , ըստ որում փոխանակ հասարակ բաներ լինելու , վարձակալ մ'է կալուածատէրի մը արտերուն մէջ , զորս իւր հաշուոյն կը մշակէ , բերքերուն կէսը կամ մէկ երրորդը տալով կալուածատիրոջ : Իսկ փոքրիկ կալուածատիրութեան մէջ , ամեն զիւրացի կտոր մը հող ունի իրեն սեփական , զոր կը մշակէ իւր շահով ու վնասով և բայց ի կառավարութեան տառանքէն , օրինապէս ոչինչ կը պարտի ուրիշին : Մեր յիշած գաւառաց մէջ , մանաւանդ մեծ կեդրոններու շուրջ , կայ մշակութեան այս երրորդ ձեւն ալ , և օր ըստ օրէ տարածիլ կը միտի . բայց առաւել հեռի տեղերու մէջ , հողագործք , թէեւ

կատարելապէս տէր լինին իրենց արտերուն, դարձեալ տարեկան բան մը կը վճարեն մերձակայ կալուածատէր իշխաններուն, և այս բացառիկ վճարումներ, որոց դէմ ստէպ դանգաւորներ կը լսուին, պէտք է համարուին մնացորդ մը աւատականութեան նախընթաց աւելի կատարեալ ձեւերուն:

Մեծ և փոքր կալուածատիրութեանց բաղդատման և ձեռք բերուած արդեանց վրայ յատկապէս պէտք է խօսինք ուրիշ առթիւ: Այսօր սա կէտի վրայ կը պնդենք որ թէպէտ մեծ կալուածատիրութեան ինչ ինչ օգուտները չեն ժխտուիր, բայց ընդհանրապէս երկրի մը շահուց և ի մասնաւորի հողագործ դասուն շահուց յոյժ օգտակար կը համարուի փոքր կալուածատիրութիւնն, որ կը մշակէ և կը զարգացնէ հողագործաց ինքնօգնութիւնն եւ գործունէութիւնն, ըստ որում իւր սեփական արտի մէջ աշխատելն ունի հրապոյր մը, զոր օտարի մը ագարակին մէջ աշխատելու դրութիւնը չի կրնար բնաւ ներշնչել, ագարակատէրն ո՛րչափ ալ բարի կամ ո՛րչափ բռնաւոր մարդ մը լինի: Այն անձնութիւն, յարատեւ ջանք և խնամք, հողին ո՛չ մի կտորն անմշակ չթողու այն հողածութիւն և հունձքն հաւաքելու և ամբարելու այն զգուշութիւն, զորս հողատէր երկրագործը կը ցուցնէ իւր արտի մէջ, կարելի չէ որ նոյն աստիճան ցոյց տայ երբ ուրիշի մը ծառայութեան մէջ հասարակ բանւոր մ'է, կամ երբ շահուց և վընասուց ընկեր մ'ունի յանձին կալուածատիրոջ մը: Բաց աստի, փոքր կալուածատիրութեան մէջ հողագործն անկախ կ'ապրի, մինչ ներհակ դրութեան մէջ ստրուկ մ'է պարզապէս, թէեւ երկրէ յերկիր տարբերին աստիճանը խտտութեան այս աննախանձելի կացութեան: Ուստի, անդլիացի տնտեսագէտներն եւս առանց վարանման կը ջատագովեն փոքր կալուածատիրութիւնը, թէեւ մեծ կալուածատիրութիւնը տիրող դրութիւնն է բրիտանական կղզեաց մէջ: Բայց վերջին ժամանակաց անդլիական օրէնսդրութեան յայտնի մէկ ձգտումն է քաջալերել փոքր կալուածատիրութեան հաստատումն և զօրացումն, և չափաւորել մեծ կալուածատիրութիւնը: — Սակայն մեծ կալուածատիրութիւնն եւս ունի առաւելութիւն մը,

որ կը պակսի միւս դրութեան: Մեծ ագարակներու մէջ կարելի է գործածել հողագործական կատարելագոյն գործիք, զորս փոքր կալուածատէրն ո՛չ կրնայ գնել, ո՛չ ալ պէտք ունի գործածելու: Արդ, մեքենայից գործածումը ժամանակիս երեւելի յառաջդիմութիւններէն մին է, որ թէ՛ աշխատութիւնը կը խնայէ և թէ՛ արտադրութիւններն աւելի կը բարւոքէ և կը բազմապատկէ միանգամայն: Հետեւապէս, փոքր կալուածատիրութիւնը կը զրկուի յառաջդիմութեան այսպիսի տարրէ մը, քանի որ անձուկ են իւր սահմաններ ու միջոցներ:

Ի ջատագովութիւն մեծ կալուածատիրութեան այսպիսի առարկութիւն մը դըժբախտապէս մէջ չի կրնար բերուիլ երբ խօսքը մեր յիշած գաւառներուն վրայ է: Ընդարձակ ագարակներ ունեցող Պէյքեր, Սաներ և Մէլիքներ ընդհանրապէս խիստ քիչ կը հասկնան հողագործութենէ: Անոնք կենաց բոլորովին տարբեր դադումներու մէջ ցոյց կուտան մեծագոյն ընդունակութիւն ու ճարտարութիւն: Ուստի, այնպիսեաց ագարակներուն մէջ հողագործական արուեստի որ և է բարւոքում չի կրնար տեսնուիլ: Այլ շատանան այն բերքով, զորս ագարակներէն կը ստանան, և փոխանակ հոգ տանելու արտադրութեան ամսան, հետամուտ են գլղացի մշակէն կամ վարձակալէն ըստ կարի մեծ բաժին մը կորուզելու, և պէտք է խոստովանիլ թէ իրենց հզօր աղղեցութիւնը լաւագոյն միջոցն է յայտ մտալին: Ասկէ յոյժ տարբեր է անդլիացի ագարակատիրոջ մը վիճակն, որ թէեւ Լորտ մը, քաջահմուտ է հողագործական արուեստին, տնտեսագիտութեան, մեքենագիտութեան և բնական գիտութեանց, և իւր հարկւաւոր մշակներու և վարձակալներու գլուխը կանգնած, հողային արտադրութեանց բարւոքման և բազմապատկման կը նուիրէ իւր բոլոր խելք և խնամք, չխնայելով հարկաւոր ծախքերը, մեքենայներ գնելու, ջրոյ ճամբայներ բանալու, պարարտացուցիչ նիւթեր հայթայթելու, ևն, ևն: Բայց եթէ տակաւին փաստեր կան այսպիսի երկրի մը մէջ իսկ մեծ կալուածատիրութիւնը ջնջելու և բնաւապէս հողագործութեան հաստատուելու, պէտք է ընդունիլ թէ նոյն փաստեր մեծագոյն իրաւամբ կը պատշաճին մեր յիշածին նման գաւառներու հողային դրութեան:

Թանգիւնաթէն ի վեր հողագործաց վիճակը շատ բարւոքած է Թուրքիոյ մէջ : Թափախ կանոնադիրն հաստատուելով, կալուածական իրաւունքները ճշգրտած և նուիրագործուած են, և աւատապետական կալուածատիրութիւնը մեծ հարուած մը կրած է : Թէեւ ուրեք ուրեք յափշտակութիւններ այս ձեւոյ ներքեւ օրինական վաւերացում ստացած են, բայց ուրիշ տեղեր ալ գիւղացիներ իրենց իրաւունքները ճանչցնելով, օրինաւոր կալուածադերքը ընդունած են : Աւաւաւարութիւնն ինք հող բաշխած է գիւղացւոց, ընդարձակ կալուածներ ետ աւելնելով նախկին Պէյերէն և Շէյխերէն, և ի փոխարէն թողակ մը կապելով ասոնց : Այս տնօրինութիւն մեծ պատիւ կը բերէ օսմանեան կառավարութեան, և ցոյց կուտայ պայծառապէս որ երբ նիւթական և բարոյական իւրութիւնը կենան բարենորոգումներ մտածանելու, հարկաւոր լոյսերն ու ծանօթութիւնները չեն պակսիր բնաւ կայսերական կառավարութեան : Ինչ որ տակաւին վերջերս Անգլիայիք որդեցին գործադրել Իրանաստանի մէջ, (մեծ կալուածատէրներէ հող գնել և դիւրադնի վաճառել գիւղացւոց, տակաւ առ տակաւ վճարելու թոյլ տուութեամբ,) քառորդ դար յառաջ Բրուսը գործադրած է գաւառաց մէջ : Շատ փախաբելի է այս տնօրինութեան շարունակուումն առաւել ընդարձակ հիման մը վրայ, զի տակաւին ահագին տարածութեամբ հողեր կը գտնուին կէս-անկախ կալուածատէրներու ձեռք, որք ո՛չ միայն վաւերական իրաւունք մը չունին, այլ նաեւ արդելք են հողագործութեան արդիւնաւորման և զարգացման, մինչ իրենց տիրած վայրերուն մէջ հարկաւոր աշխատասէր գիւղացիներ զուրկ կը մնան հողէ : Ժամանակին այս բարենորոգումն եւս ի գործ պիտի դնէ անշուշտ : Այն մասնաւոր պատճառներ որովք մեծ կալուածատիրութիւնը, մասնաւոր մեր յիշած գաւառներու մէջ, տակաւ կը տկարանայ : Նախ, անդրանկոյնեան երաւոնք չկայ, ինչպէս Անգլիոյ կամ Հունգարիոյ մէջ, որպէս զի կալուածոց ամբողջութիւնը նոյնութեամբ անցնի սերնդէ ի սերունդ : Անդրանկութեան իրաւունքն այն է որ, եթէ հայրն ի կենդանութեան տարբեր տնօրինութիւն մը չընէ, նորա բոլոր կալուածներն

ու ինչքը կ'անցնին անդրանիկ մասնէ գաւառին : Այս կարգադրութեան շնորհիւ աղանականութիւնը դարէ ի դար կը պահէ նոյն կալուածներ, որք ընդհանրապէս եղբարց մէջ չբաժնուելով, չեն կոտորակուիր, ինչպէս սակայն տեղի կ'ունենայ Գրանասայի և Գերմանիոյ մէջ, ուր եղբայրական իրաւանց հաւասարութիւնը ճանչուած է : Պէյերը մեռնելով, հողերը կը բաժնուին որդւոց միջեւ, որով ընդարձակ կալուածները փոքրանալ կը միտին հետզհետէ : Ուրիշ խնդիր մ'է թէ իրենց հօրմէ նուազ հողի տէր Պէյաւտէք զանազան միջոցներով ջանադիր լինին լայնցնելու իրենց սահմաններ : Իրողութիւնն այն է սակայն թէ կան բնական և օրինական պատճառներ, որք մեծ կալուածատիրութիւնը տկարացնել կը նպաստեն մեծապէս : Այսպիսի պատճառ մ'է նաեւ կալուածատէրաց վարած շույլ և զեղխ կեանքն : Այս տեսակ կենցաղավարութեան մը համար միշտ պատրաստ դրամ հարկ է, զոր ամեն վայրկեան չկրնալով ստանալ ազարակաց հասոյթէն, ծանր տոկոսով փոխ կ'առնուն դրաւ տալով ազարակներն, որք ի վերջոյ պարտատէարց կ'անցնին, որք գիւղացւոց կը վաճառեն զայն մաս առ մաս : Մեր յիշած գաւառներուն թէ՛ օսմանեան, թէ՛ բուսական և թէ՛ պարսկական բաժնին մէջ շատ պատահած է այս : Բազմաթիւ խաղաղիկ գիւղացիներ ուրիշ կերպիւ հողատէր չեն կրցած լինել բայց եթէ շնորհիւ նախկին կալուածատէրաց անխոհմտութեան : Ի վերջոյ, բոլոր այս գաւառաց մէջ գտնուած են խելացի շահաղէտներ, որք մինչ աժան էին հողերը, գնած են մեծ քանակութեամբ, և յետոյ շահով վաճառած են այն գիւղացւոց որք հոյ չունէին, կամ աւելի հող ունենալու պէտք կը զգային : Այս միջոց տակաւին ի գործ կրնայ դրուիլ մեծ յաջողութեամբ, և խնայողութիւն է օգուտ բաղել ներկայի նպատակաւ պարագայներէն, ինչպէս նաեւ ապագայ պատահականութիւններէն :

Ահա, շնորհիւ այս ամեն նպատակաւոր պայմանաց, մեծ կալուածատիրութիւնը, կամ Պէյերը իշխանութիւնը, տարուէ տարի կը տկարանայ մեր յիշած գաւառներուն մէջ, և հողատէր երկրագործներու թիւը կ'աւելնայ : Տնտեսական գոհացուցիչ երեւոյթ

մ'է այս, որ՝ եթէ ուրիշ պայմաններ ալ նպաստաւոր լինին՝ յոյժ արդիւնաւոր կըրնայ հանդիսանալ:

Ռուս կառավարութիւնն իւր գրաւած գաւառներու մէջ խնամ կը տանի չդպլէլու Պէյերու, Խաներու, և այլ մեծ կալուածատէրերու ստացեալ իրաւանց, ժողովրդեան այս ազդեցիկ մասն իրեն դէմ չյարուցանելու և ընդհակառակն անոնց բարոյական աջակցութիւնն ստանալու համար: Հետեւապէս, ռուսական Հայաստանի և Կաւկասիոյ մէջ շատ տեղեր կը տեսնուին պարսիկ, քուրդ և այլազգ կալուածատէրներ, որք ունին ընդարձակ ագարակներ, յորս կ'աշխատին իրենց դաւանակից և ոչ-դաւանակից բանւորներ, կամ զորս կը մշակեն քրիստոնեայ վարձակալներ: Այսպէս քաղաքական նկատումներով ռուս կառավարութիւնը չի դպլիր մեծ կալուածատիրութեան կազմակերպութեան, և չաճապարեք Կաւկասեան լերանց եւրոպական կողմը ներմուծած հողային նոր օրէնսդրութիւնն ⁽¹⁾ ի գործ դնել Կաւկասիոյ մէջ: Պարագայ մ'է այս, որ ապագայ պատահականութեանց տեսութեամբ ունի իւր նշանակութիւն: Եւ ըստ որում այս գաւառաց մէջ հողագործք առաւելապէս հայ են, ի դէպ է յիշեցնել թէ Ռուսիա, հայ հողագործները քաջալերելէ հետի, դրապէս զրկանք մը կ'ընէ անոնց, նոյն իսկ զրամի փոխարէն չտալով այն հողեր որոց պէտք ունին իրենց ապրուստին համար, և զորս յարմարագոյն կը դառնէ ճրիւղապէս բաշխել հեռաւոր վայրերէ բերուած ռուս գաղթականներու: Այս պատճառաւ, ռուսական Հայաստանի երկրագործք՝ իրենց բազմամարդութեան համեմատ՝ խիստ քիչ հող ունին բաղդատմամբ իրենց եղբարց որք կը բնակին Արարատայ այս կողմը:

Իսկ Պարսկաստանի մէջ, հողային դրութիւնն ամենէն աւելի անկարգ պայմաններու ներքեւ կը գտնենք: Հողերը կա'մ կառավարութեան են և կա'մ ցեղապետներու, Խաներու, Պէյերու, Շէյխերու, պարսիկ, քուրդ, և այլն, որք օրէնք և իրաւունք չատչեն ճանչնար: Այս գաւառաց հայ երկրա-

գործներու վիճակն համեմատապէս առաւել անտանելի կը թուի, ինչպէս Գարատաղի ողբալի դէպքերն անդամ մ'եւս տալացուցին: Բայց մեծ կալուածատիրութիւնը տըկարացնող քանի մը բնական և բարոյական պատճառներ, զորս վերեւ յիշեցինք, այս պարսկահայ գաւառաց մէջ ևս զգալի կը լինին տակաւ: Անգլիացի հիւպատոս մը կը գրէր քանի մը տարի առաջ թէ Սովետ-Պուլազի գաւառակին գրէթէ բոլոր մշակեալ հողերն Հայոց ձեռքն անցած են քուրդ կալուածատէրաց շուրջ և վառչուէ կենցաղավարութեան շնորհիւ:

Բ. Ք.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

ԱՆԳԼԻՈՅ ԱՐԴԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ԱՆԴԱՄՈՑ

ԼՈՐՏ ՆՈՐԹՊՐՈՒՔ, ԼՈՐՏ ՍԵԼՊՈՐՆ,
ՍԸՐ ՉԱՐԼՍ ՏԻԼԶ, Պ. ՉԱՄՊԸՐԼԷՅՆ,
ԼՈՐՏ ՏԵՐՊԻ, ևն. ևն.

Ծովային գործոց նախարար Լորտ Նորթպուրեք, որ վերջերս իբր արտասովոր Բոմբէյ Նգիպտոս զրկուեցաւ, բաւական երկար ժամանակ կեցած է ի Հնդկաստան և Արեւելից գործոց լաւ տեղեակ կը համարուի: Սակայն կ'ըսեն թէ իւր պաշտօնատան վերաբերեալ գործոց յոյժ անգէտ է: Ճշմարտութիւնն այն է որ իւր վարչութեան ներքեւ, ծովային գործերը բաղդատաբար ստորին վիճակի մէջ ինկան, վիճակ որուն վրայ քանի մը հայրենասէրներ ճիշդ ու աղաղակ բարձան, յիրաւի անհանգիստ լինելով իրենց երկրին տալագային նկատմամբ:

Առեւտրական նախարար Պ. Չիլտըրս գեղազանց վարչագէտ մ'է. բայց՝ իբր քա-

(1) Ռուսահայոց բառով «Համայնք» ի դրութիւնը (Գոմիւն), զոր ուրիշ առթի մը կը վերապահենք բացատրել:

ղաքագէտ անձ՝ բաւական միջակ է : Ան-
խորհուրդ է և շատախօս, և շատ անդամ-
ներ նախարարութիւնը վտանգի ենթարկած
է կանխահաս ու անպատեհ խոստովանու-
թիւններ ընելով առ իւր ունկնդիրս : Պ.
Կլատսթոն այս ամենը կը ներէ իրեն՝ իւր
անձնութեան համար առ ազատական
կուսակցութիւնն, որուն ծառայած է միշտ :

Նախարարապետին առաջնակարգ աջա-
կիցն է ներքին գործոց նախարար Սըր Ուիլ-
եամ Վէրնըն Հարքըրթ, պերճախօս ա-
տենաբան, նշանաւոր քաղաքագէտ, ան-
խոնջ աշխատող, որ ամեն տեսակ բան գիտէ
խորապէս : Այս բոլոր գերընտիր բարեմաս-
նութեանց կը միացնէ թերութիւն մը, որ
անհամակերկի կ'ընծայէ զնա իւր պաշտո-
նակցաց, և անտանելի՝ ամեն մարդու : Զայ-
րացկոտ է, բուռն, խիստ, և լեզուին մէջ
բիրտ. կը կարծէ թէ ո՛չ մէկուն ակնածանք
կը պարտի, և երբէք չպիտի հասկնայ Վոլ-
թէրի սա ճշմարիտ խօսքը .

Կրթութիւնն այն է մտքին համար,
ինչ որ է շնորհը գէմքին համար :

Այդ սպարտացի պետական մարդուն
կարծեօք, քաղաքավարութիւն ու կրթու-
թիւն հոմանիշ կը համարուին խարդախու-
թեան :

Լորտ Սէլդորն, որ դեռ վերջերս ազ-
նուական եղաւ, իւր ուսմական անունով
կը կոչուէր Ուպէրթ Լով, և դատական նա-
խարարի պաշտօն կը վարէ :

Մշակեալ միտք մ'ունի, հմուտ պեր-
ճախօս մ'է, և Նրեսփոխանական ժողովոյ
մէջ շատ անդամ փայլուն կերպով մասնակ-
ցած է վիճարանութեան : Ծանր պակա-
սութիւն մ'ունէր, այն է չափազանց ան-
կեղծութիւն մը, որով՝ աստենաբանութեան
տաք միջոցին՝ երբեմն կը զոհէր իւր կու-
սակցութեան շահերը : Թանկագին այլ քիչ
ճապուկ գործիք մ'էր, և Պ. Կլատսթոն,
ուզելով իւր կուսակցութենէն չհեռացնել
զայն՝ իրմէ առնելով հանդերձ այդ կուսակ-
ցութիւնը վտանգի ենթարկելու միջոցները,
ազնուական ըրաւ զիպէր, և դրաւ զայն
պատուարժան ճօթներու այն դասին մէջ,
որ Լորտերու ժողով կը կոչուի :

Արմատական կուսակցութիւնն, որ ա-
մեն տարի, ամեն օր կ'աճի յԱնգլիա, եր-
կու հոյակապ ներկայացուցիչ ունի նախա-
րարութեան ծոցին մէջ, որք են Սըր Չարլս
Տիլք և Պ. Չամպլըթըյն : Իբր յօդ կը ծա-
ռայեն Պ. Կլատսթոնի նախարարութեան և
նախարարական կուսակցութեան ձախա-
կողմեան միջեւ, և կը ջանան շահիլ արմա-
տական ընտրողներ, որք այժմեան Եկեղեց-
ւոյն բարձումը, Լորտերու ժողովոյն ջնջումը
և կալուածատիրական դրութեան մէջ հիմ-
նական փոփոխութիւններ կը խնդրեն :

Սըր Չարլս Տիլք, որդի փաստաբանի մը
որ մեծ հարստութիւն թողած է իրեն, հա-
կառակ իւր սեպուհի ախղորին՝ ուսմական
ծագում ունի Պ. Չամպլըթըյնի պէս : Այս
վերջինը գոռոզ է, հպարտ, արհամարհոտ և
ամենուն ատելի : Այս բաները մէկ կողմ
թողլով, արմատական կուսակցութեան այդ-
երկու անբաժանելի դուխները բազմաթէք
անձեր են, և լաւ կրթութիւն մ'ունան-
ժըխտելի տաղանդ ունին : Սըր Չարլս Տիլք,
որ երբեմն արտաքին գործոց նախարարու-
թեան խորհրդական էր, նշանաւոր ձիւղեր
ցոյց տուած է . բայց իւր տարօրինակ գա-
ղափարները երկիւղ ազդած են Լորտ Կը-
րանվիլի, որ հրաժարած է անոր աջակցու-
թենէն և երկրորդական կարեւորութիւն ու-
նեցող պաշտօն մը տալ տուած է անոր նա-
խարարութեան մէջ :

Տէրութեան կնքապահ (1) Լորտ Գար-
լինկֆորտ, Լանքանսթրի դքսութեան դի-
ւանապետ (2) Պ. Տոտսըն, Հնդկաստանի
նախարար (3) Լորտ Քլամպլըթըյն, գործօն նա-
խարարներ, ուսեալ պաշտօնատարներ և
աննշան անձեր են : Գաղթականութեանց
նախարար Լորտ Տէրպի դասալիք մ'է պահ-
պանողական կուսակցութենէն և Լորտ Պի-
քոնսֆիլտի պահպանողական վերջին նա-

(1) Անուանական պաշտօն մը, զոր վարողը
առանց մասնաւոր պաշտօն ունենալու՝ կը մասնակցի
նախարարութեան աշխատանոց :

(2) Նմանապէս անուանական պաշտօն մը, զոր
վարողը մասնաւոր երկրագործական ճիւղին կ'ըզ-
բաղի :

(3) Անգլիական կառավարութեան կողմէ Հնդ-
կաստանի գործոց վերին տեսուչն է Լոնտոն :

խարարութեան մէջ արտաքին դործոց նախարարի պաշտօն վարած է: Դրական, շատ դրական միտք մ'ունի, և հազուադիւտ յամառութիւն մը՝ որ կրնայ ուրիշ անուամբ յորջորջուիլ: Ժառանգ մեծ անուան մը, չունի բնաւ իւր հօր ո'չ մտաւորական մշակութիւնն, ո'չ գրական ճաշակն և ո'չ համոյակատար մարդավարութիւնն, իւր հօր՝ որ ժամանակ կը գտնէր իլիականի մէկ երդը թարգմանելու՝ խորհրդարանական երկու ատենաքանութեանց մէջ տեղ: Անհուն հարստութեան տէր, Լորտ Տէրալի խնայողութիւնը մինչեւ կծծութեան կը տանի: Իւր հագուստը կապուստը հակապատկեր մը կը կազմեն իւր սկետին, Պ. Ալատսթոնի հագուստին կապուստին հետ: Թէեւ յամառ, այլ անորոշ և վարանոտ է:

Իռլանտայի փոխարքայ լորտ Սթէնէր նախարարութեան անդամոց ամենէն առատապէս վարձատրեալն է: Տարին 20,000 անգլ. ոսկի թոշակ կ'ստանայ, մինչդեռ Պ. Ալատսթոն միայն 5000 անգլ. ոսկի: Բայց ի'նչ գնով ստիպուած է գնել այդ պատիւներն և այդ առատ թոշակը: Ֆէնիաններու կատաղի ատելութեան առարկայ, գէշ աչքով նկատուած Օրանփեաններէն որոց ըստիպուած է մոլեռանդութիւնը զսպել, և ոչ իսկ մէկ բարեկամ ունի իւր կառավարած բազմամարդ կղզւոյն մէջ: Իւր բնակարանէն դուրս կ'ենէ ընկերակցեալ գաղտնի գործակալաց և ոստիկանաց բանակով մը, և ամեն վայրկեան կը վախնայ ենթարկուելէ լորտ Քէվլընտիլի բաղդին, որ ինչպէս կը յիշուի՝ անցեալ տարի Ֆէնիաններու ձեռք սպաննուեցաւ ի Ֆէնիքս-Բառք: Դաշոյնն և ուժանակը պարսպ չեն կենար ի Տըպլին, և Պիդմայիոն սուելի սպառնացեալ, կասկածոտ և գողդոջուն չէր իւր պալատին մէջ, բան Իռլանտայի փոխարքայն, ներկայացուցիչ ատելի կառավարութեան մը:

ԲԱՆԱՍՏԵՂ ԾԱԿԱՆ

ԱՌ ԿՈՅՄՆ ԱՊԱՔԻՆԵԱԼ

Աստեղն հանդոյն լուսեղէն
Որ իւր թեւովք մաքրասուն
Վանէ դիտար գիշերոյն,
Եւ երկնային կամարէն
Լուսաւորէ զճանապարհ
Ուղեւորին մայրեակ,

Դու եւս, ով էոյս, յաղթական
Յաւոյն որ դքս շնորհներ
Յելս անդ այդուն ըստուերէր,
Կը վերածնիս հեշտութեան,
Եւ ընդ ուղիս իմ անդոյս
Սփռես ըղիւնդ և ըղյոյս:

Հակաիդ վերայ անտպակ
Ոյր դալիութիւնք կ'անհետին,
Գեղեցկութեան գեցուհին
Յանէ ծաղկունս երգներանդ,
Եւ քո նայուածք յուսաբեր
Մեղմացընէ զիմ վշտեր:

Ժամերն՝ որ քեզ հակելով
Արտասուէին սրտահեղձ,
Յաւոց տեղքէն ոյսօր զերծ
Գարնանային բոյրերով
Գան խնկարկել քեզ, թռչուն
Ի՞ծաղկածիր քոյնն բոյն:

Զարթուցանեն մերթ մատուցող
Ըզնեշտ մրմունջ դաշնակին,
Եւ նուագես թախծադին
Սրտերու խառն սիրաթունս,
Ու քո երգեր երկնային
Մըխիթարեն իմ հոգին:

Անդ՝ ի սրահս շողշողուն
Բիւր ճրբագաց ի նըշջլ
Երբ պար ածես, հոյլ ի հոյլ
Կուսոնք՝ շնորհացդ զմայլուն
Ըզբեղ ոգի մ'օդեղէն
Կարծեն՝ իջեալ երկնքէն:

Հեռի՛ թախիծն արդ ի քէն
Հեռի՛ ի քէն իմաստունք
Որ յամենայն զուարճութիւնք
Արտասուքներ կը խառնեն.
Անվշտակիր զուարթուն,
Յաւիտեան մեզ ժպտէ՛ դուն:

Զ Ա Ն Ա Ջ Ա Ն Ք

ՄԱՐԴԱԿՆԵՐ ԾԱՌԸ

Տարուին անգլիացի հռչակաւոր գիտունն ասիէ առաջ ուշադրութիւն հրաւիրած է երկու կամ երեք տեսակ մտակերտունկերու գոյութեան վրայ, որք միջատները կը բռնեն և անոնց վրայ գոցելով իրենց տերեւները, արիւններն կը ծծեն և միայն անոնց չորացած մորթը կը թողուն: Կարելի է այդ տունկերը սնուցանել մսի փոքրիկ կտորներով, զոր կը յօջտեն միեւնոյն անյադութեամբ: Բայց, ո՞րքան հետաքրքրաշարժ և տարօրինակ լինին այդ ծաղիկներ, չեն կըրնար բաղդատուիլ ծառի մը հետ որ կը գտնուի Մատակառար կղզւոյն մէջ: Այդ ծառը կարող է բռնել և ծծել մեծ կենդանիներ, որպէս կապիկներ, և նոյն խոկայրեր և կիներ, երբ իւր ոտերուն մագլելով դադաթն ելնեն: Մատակառարէն վերադարձող ուղեւոր մը հետեւեալ կերպով կը նկարագրէ զայն.

«Նիքոտո ցեղին վայրենիք կը պաշտեն այդ ծառը: Զեր մտաց առջեւ բերէք ութ ոտք բարձրութեամբ անանասի ծառ մը և դադաթար մը կրնաք ունենալ անոր կոճղին վրայ: Ծառին դադաթէն կը մեկնին տասնմէկ տասներկու ոտք երկայնութեամբ ութ ահագին տերեւներ, որք անշարժ գէպ յերկիր կախուած են:

«Գաղաթը բոլորչի է, սպիտակ, գոգաւոր և այնպիսի ձեւ ո՞ւնի, իբր թէ փոքր սկաւառակ մը դրուած լինէր աւելի մեծ սկաւառակի մը մէջ: Գաղաթը ծաղիկ մը չէ, այլ տեսակ մը ընդունարան որ կը պտուռնակէ ջինջ ու թանձր հեղուկ մը՝ որ մեղրի համ և արբեցուցիչ ու քնաբեր գերազանց յատկութիւններ ունի:

«Մեծ սկաւառակին — եթէ կարելի է այսպէս ըսել — եզերքը կը գտնուին երկայն, կանաչ ու մազոտ բալմաթիւ բոլորոյններ, որոց իւրաքանչիւրն եօթն ութ ոտք երկայնութիւն ունի և սրածայր կը վերջանայ: Այս բոլորոյններէն վեր, մեծ ու փոքր սկաւառակին միջեւ գտնուած տեղէն վեց սղոցածեւ տերեւներ կը մեկնին գէպ յերկինս ուղղուած, որք կը չարժին ու կը դալարին հրաշալի արագութեամբ:

«Այժմ պիտի նկարագրեմ ձեզ, կը յարէ ուղեւորը, եղբրական գէպ մը որոյ ականատես եղանք:

«Վայրենիներն ընդհատեցին մեր հետազոտութիւնքը՝ մահահամբոյր աղաղակներ արձակելով, զարհուրելի պարեր խաղալով եւ քաւութեան օրհներգներ երգելով իրենց նուիրական ծառին շուրջն:

«Իրենց երգերն ու աղաղակները երթալով աւելի սուր և աւելի վայրենի կը լինին: Անդ գտնուող կիներէն մին կը չլծապատեն, կը հրեն զայն իրենց նիւակաց ծայրերով, կ'ստիպեն որ մագլցի ծառին դադաթն և անդ նստի, սղոցածեւ տերեւոյ մէջտեղ, որք կը դալարին իւր շուրջն: Յուսահատութիւնը կը կարգացուի իւր գիմաց վրայ. արք վարէն կը սրուան. Բէռ, Բէռ (խմէ, խմէ):

«Վերջապէս կը հաւանի լամել ընդունարանին մէջ սլարունակեալ թանձր ու արբեցուցիչ հեղուկէն: Յետոյ ոտքի կ'ելնէ վայրի մոլեղնութեամբ մը որ իւր գէպքը կը կերպարանափոխէ և իւր անգամները կը սարսուցնէ, բայց գետին չնետուիր ինչպէս որ ընել կը թուէր յառաջագոյն:

«Զազրաթորմի մարդակերն, որ զգայազիրի և մեռած կը թուէր, կը վերադառնայ իւր գոթիւնին կենդանութիւնը: Նորը ու փափկիկ սղոցածեւ տերեւներն, սովալլուկ օձերու կատաղութեամբ, ի քթթեւ ական կը չլծապատեն իրենց զոհին գլուխն, և որպէս թէ միշտ լինէին ինքնաբուրս բնադուռ մը, դամքան զգամ աւելի մօտէն կը սեղմեն հէգ կնոջ վիզն ու թեւերը: Այն ատեն, մինչդեռ իւր ահուելի աղաղակներն և եւս առտուել ահուելի ծիծաղները տակաւ առ տակաւ դիւայն հանգամանք մը կ'ըստանան, բողբոջներն, մին միւսին ետեւէն, կը բարձրանան բիրտ արագութեամբ մը և չարաբաստիկ կնոջ մարմինը կը գրկեն իրենց որոն սլատառող վագրերու անդուծ անյադութեամբ:

«Այն ատեն գէպ յերկիր կախուած ութ մեծ տերեւները վեր կ'ելնեն յամրաբար, իւրարու կը մօտենան, թշուառ կնոջ մարմնոյն կը փաթթուին, կը սեղմեն և կը ճնշեն զայն ջրաբաշխական մամլոյ մը նման:

«Քանի մը վայրկեան յետոյ, տեսայ որ դադաթէն գէպի կոճղը կը հոսէր ընդունարանին թանձր հեղուկն, արեամբ խառն:

« Ի տես այսմ, վայրենիներն ոռնալով ծառին վրայ յարձակեցան, և իրենց բաժակներով, ձեռքով և լեզուով սկսան խըմել այդ հեղուկէն տխորժանօք ու հեշտութեամբ: Ասոր յաջորդեց շուայտութեան ու վայրենական զրօսանաց աննկարագրելի տեսարան մը, որմէ յետոյ վայրենիներն զգայալիկ դետին ինկան:

« Ուղեկիցս շուտով դիտ առաւ տարաւ անտառաց խորն՝ մոռցնել տալու համար ինձ այս սարսափելի տեսարանն: Ուր էր թէ բնաւ տեսած չլինէի զայն »:

ՆՈՐԱՎԷՊ

ԿԱՏԱԿ ՄԷ

Ա.

1879 ի ձմեռն այն ձմեռներէն էր որը մեր հին լեզուաւ «կարէձմեռն» կը կոչուին: Մի քանի տարիներ կային յորմէ հետէ Պոլիս չէր տեսած այդպիսի ձիւնազարդ եղանակ մը:

Սակայն ձմրան հովերը որքան ալ դառնալուչ լիջէն, բայց և այնպէս ձմեռը ախորժելի եղանակ է անոնց համար որոց տուներու մէջ մահ չէ պատահած նոյն տարին, և որը կարող են կրակին մօտ անցընել իրենց գիշերուան ժամերը առանց մեծ հոգերու:

Այս մենաշնորհեալ դասուն պատկանելու բաղդն ունէր երբեմն ձկնորս Նիկողոս աղբարն, որ կը բնակէր Սամաթիա, Նարլը-Քարու:

Աւանդութիւնը կը պահանջէ երանի կարգաւ երկրագործներուն, բայց չենք կարծեր որ զուրկ լինի հրապոյրէ կենցաղ մը որ կը անանի ծովու օդով: Նիկողոս աղբար շատ տարիներ երջանիկ ապրեցաւ — որքան այս բառն իրականութեան մէջ կրնայ գործնական լինիլ: — Մանչ զուակ մը ունէր և աղջիկ մը: Մեր պատմելիք դէպքին տեղի ունենալէն մի քանի տարի առաջ, ձկնորսին մանչ զուակը, արդէն տասներկնը տա-

րեկան, իւր հօր աջ բազուկը կը համարուէր: Նրբ տղան ամէն գործոց լաւ հմուտ եղաւ, Նիկողոս աղբար նաեւին ու ուռկանը յանձնեց զաւակին, և գոհանալով վերին հսկողութեամբ՝ կ'ապրէր ինչպէս կ'ապրին գործէ քաշուած հարուստ վաճառականը:

Սակայն հաւասարութեան օրէնքը անողորմելի կերպով գրօշմեալ է մեր ճակատագրին վրայ: Ձկնորս մ'ալ կրնայ դժբաղդ լինիլ այնքան որքան մեծատունը: Նիթէ Աստուած հաստատած չը լինէր հաւասարութեան այդ իմաստուն օրէնքը, աղբարտներու վիճակը անտանելի պիտի դառնար հարուստներու նախանձին առջեւ:

79 ի ձմեռէն մի քանի տարի առաջ, ձրկնորսն ունեցաւ իւր առաջին դժբաղդութիւնը: Կինը մեռաւ: Աղէկ կին մ'էր, ժըրաջան և աշխատասէր: Թէպէտ զաւակը կը հոգար ամէն պէտքերը, բայց և այնպէս մօրը սիրտը անհանգիստ էր: Կաշխատէր որպէս զի իւր կողմէն նպաստէ զաւակին մի քիչ խնայողութիւն ընելու և այնու կարելի ընծայէ իւր մայրենի խոտականին իրադրութեամբ: — Իշխանուհի թէ աղքատ, մօր մը խոտականը միշտ նոյնն է, ամուսնացնել զաւակը: Առ այս կէտ նպատակին կը նկրտէր բարի կնոջ բոլոր գործունէութիւնը: Բայց բաղդ չունեցաւ տեսնել իւր վառիքին կատարուիլը: Օր մը աշխատութենէ երբ վերադարձաւ — կ'երեւի թէ պաղ առած էր —, անկողին մտաւ և ալ չեւաւ: Նրբ կինը թաղեցին, Նիկողոս աղբար շատ լացաւ: Մեռնողի մը վրայ որքան ալ շատ ցաւիք, բայց և այնպէս, եթէ անձնատպանութեան որոշում չենք տար՝ ի հարկէ կը սրբենք մեր արցունքները և կ'սկսինք մտածել թէ ինչպէս ապրինք որ կեանքը դարձեալ քաղցր լինի մեզ: Այս բնական օրինաց հետեւեցաւ Նիկողոս աղբար ալ:

Աղջիկը, Մաքրուհին, հազիւ տասը տարեկան կար և կարող չէր տանտիկին լինիլ: Ուրեմն պէտք էր որ ձկնորսը մանչը կարգէր: Աղէկուկ բարի հարս մ'առաւ, միջ այն աղջիկներէն, որը կամուրջին Պոլսոյ կողմը շատ կը դանուին, մաքուր օդ կը ծծեն, քաջաւոր լեն, և իրենց կարմիրաշուկ երեսներն օժտեալ ամօթագեղ դեղեցկութեամբ:

Ուրախութիւնը վերագարձած էր տան մէջ: Նիկողոս աղբար հինգ տարիներէ ի վեր

Թոռ մ'ալ ունէր : Իւր Պետիկին ձեռքէն բռնած , կամ վնաս առջեւը ձգած , դուրս կ'ելլէր , առտու իրիկուն եկեղեցի կ'երթար . ծովեղերը կ'իջնէր , իւր յարգելի պաշտօնակցաց հետ նարտ կը խաղար , Թոռնիկն ալ իւր հասակակցաց հետ ծովուն խնձերովը կ'ըրօսնուր :

Նիկողոս աղբար շատ կը սիրէր Պետիկը և չէր ուզեր վնաս դպրոց դնել : — Տասը տարեկան ըլլայ , կ'ըսէր , և այնուհետեւ դպրոց կը դնեմ : — Բայց չեմ կարծեր թէ Պետիկը այսօր Նաուլը-Գաբուի վարժարանը դառնուի : Այս տարի օգոստոսի վերջերը երբ Ս. Փրբիլ-չի հիւանդանոցը այցելութիւն մը տալու առթիւ Նաուլը-Գաբուէն անցայ , Պետիկին համար հարցուցի փնտուցի . բայց Պ. Մարգար Լուսաբերեան , դպրոցի ուսուցիչը , պատասխանեց թէ իւր աշակերտաց մէջ այդպիսի տղայ մը չկար :

Ուրեմն շատ հաւանական է որ ձկնորսը երբէք դպրոց չըլլայ իւր Թոռը : Այս պակասութեանը համար չեմ ուզեր ծերունին մեղադրել , վասն զի իւր տեսութիւնները շատ կը հակառակէին մեր արդի գաղափարաց . և անշուշտ ինքն իւր գաղափարաց համեմատ պիտի մեծցնէր իւր Թոռը և ոչ թէ մեր փախադանաց պիտի անար :

Եւ յետոյ , կարող չեմ որոշապէս ըսել թէ ինքն իրաւունք ունէր թէ մենք :

Առանց քաշուելու , ամեն տեղ կ'ըսէր թէ « Թոռը կարգաւ զրեւ սորվելով ինչ պիտի ընէ : » Խեղճ մարդը կարող չէր ըմբռնել թէ (ըստ իրեն անշուշտ) ինչ հարկ կար իւր Թոռը , երբ մեծնար , տանիլ նստեցնել մութ խոնաւ սենեակի մը մէջ , որպէս զի հացի մը ստակ հանէ : Միթէ այդքան ստակ չէ՞ր կրնար վաստակիլ ծովու վրայ հանգիստ , ազատ ապրելով , մեծնալով : « Տեսնենք դործ մ'ալ պիտի կրնայ դառնալ : » Շատ պահաւորակելի չէ ազգա ձկնորսը : Ամէն օր իւր Թաղին մէջ կը տեսնէր շատ մը պատանիներ , որք թէպէտ դպրոց զնայեր էին , մի քանի լեզուներ զիտէին , բայց և այնպէս փողոցները թափառական կը շրջէին , նիհար , տիպոյն , խեղճ վիճակի մէջ :

— Փա՛ւք Աստուծոյ , կ'ըսէր , տղաս առնց պէս չէ , ողջ առողջ է , իւր հացն ալ կը ձարէ , տունն ալ վարդի պէս կը պահէ .

կարգուեցաւ , Աստուած Թոռ մ'ալ պարգեւեց ինձ : Տղուս տարիքն ունեցողներէն նայինք քանինե՞րը կրցած են կարգուիլ : Եթէ տղաս դպրոց չըլլէի , այսքանն ալ ձեռքս չպիտի անցնէր :

Ինչպէս կը տեսնուի , այս մարդը շատ յամառ էր , գլուխը հաստ , և չէր կրնար ըմբռնել դաստիարակութեան բարիքները . հետեւաբար դարմանալի շթուիր որ 1879ին , Թոռանը ձեռքէն բռնած կ'ըրօսնուր Սամաթիոյ ծովեղերը :

Սակայն ձկնորսին ուրախութիւնը շատ չտեսեց : Իւր գաւաղը , Պետիկին հայրը , մի քիչ տաք գլուխ էր . ո՛չ տաքէն կը հասկընար , ո՛չ ցուրտէն . տաքնալով , քրտնելով , մահելով , օր մը հիւանդցաւ . երբ կանանց դեղերը օգուտ չըրին ու վիճակը ծանրացաւ , բժիշկ մը բերին որ ասիւլէճա՛ն է ըսաւ , և խեղճ տղան քսանեւջորս կամ քսանեւհինդ տարեկան մեռաւ :

Սեւ օրը այն օրն եղաւ Նիկողոս աղբոր համար : Աղջիկը , հարսը , Թոռը , ինքը շատ լացին , շատ պոռացին . երբ դադաղը վրան բաց դուռնէն դուրս հանեցին : Չմեղադրենք խեղճերը այս հին սովորութեան համար որ տակաւին կենդանի է Սամաթիոյ և Գոււմ-Գաբուի կողմերը : Ով որ այս աշխարհէս կը մեկնի , վերջին փառասիրութիւն մը ունի , ողբան և լան իւր վրայ : Այդ ողբը մխիթարանք մ'է մեռնողին , մխիթարանք մը ապրողին համար : Անոնք որ կրնան լըրադ իրներու միջոցաւ իրենց ողբը աշխարհի կ'իմացնեն . բայց ո՞վ պիտի դրէ խեղճ ձկնորսի մը համար , և ի՞նչ ըսելով զրեւ :

Ինչ և է , խեղճ տղան տարին թաղեցին Պալըզը մօրը քով : Յուզարկաւորները ետ դարձան , հօրը « գլուխդ ողջ մնայ » ըսին . շարժ իրիկուն տէրտէրը եկաւ , կիրաւաւորն ըրին : Կիրաւաւորէն երկու երեք օր վերջ Նիկողոս աղբար նաւամասոյցը իջաւ . ծախեց նաւակը , պարանները , ուսկանները , ա՛լ Աստուած գիտէ ինչ արցունքներ թափելով : Հողաց ձորան պարէնը , սոխը առաւ , ածուխը առաւ , քիչ մ'ալ ըստակ աւելցաւ , այն ալ պահեց : Ամառը Աստուած որորմած էր : Նիկողոս աղբար շատ աղէկ գիտէր որ իւր անմեղ տարաբաղդ որբերուն համար Նախախնամութիւն մը կար , և այս մասին ալ իրեն համակարծիք ենք :

Այնուհետեւ երբեմն երբեմն Պալլադը կ'երթար, տէրտէր մը կ'առնէր հետը, օրհնել կ'ուտար զաւակին ու կ'նշէր գերեզմանները, կուլար կուլար ու տուն կը դառնար: Հարսը, աղջիկը, թոռնիկն առած նստած այսպէս սուգով անցուց Նիկողոս աղբար 79 ի մեծ ձմեռը:

Բ.

Այն ձմեռն այսպէս տխուրութեամբ անցաւ և կարող չէնք ըսել թէ ուրախութիւնը վերստին կը տիրէր Նիկողոս աղբոր տան մէջ: 1880ի դարնան Ս. Զատիկէն վերջ, արդէն մտատանջութիւնը մեծ էր այս դժբաղդներու համար երբ չորեքշաբթի ցերեկ մը դուռը զարկին. հարսը պատուհանէն նայեցաւ և խնդալով վար վազեց դուռը բանալու: Մաքրիկն ալ, Պետիկն ալ եկան և սկսան ուրախութեամբ հիւրին ձեռքերը պաղտել, այն ալ անոնց երեսները կը պագնէր: Կը տիրէր այն սրտի զեղումը որ միայն այս կարգի շրջանակներու մէջ ի յայտ կուգայ այնքան ու ժով: Հիւրը իրենց անգականներէն էր, Թագուհի, որ Գատը գիւղ կ'անցընէր ժամանակին մեծ մասը: Ժամանակաւ այն տեղի երեւելիներէն միոյն տան մէջ կաթընտու եղած ըլլալով, այժմ որ իւր սնուցած տղայներն մեծցեր էին, անոնց գրեթէ մօր տեղ էր, այն սրտառուչ աւանդութեան համեմատ որով մեր մէջ կաթնտուն երկրորդ մայր կը համարուի:

Չեմ գիտեր թէ մեր ընթերցողաց ո՞րքան ախորժեղի պիտի լինի այս տգէտ ընտանիքներու միջեւ եղած խօսակցութիւններն, եթէ զանոնք ամբողջապէս աստ յառաջ բերենք: Ի՞նչ ընենք, Բարիզի ասլաններու պատմութեամբ սնած մտքերն անշուշտ իրենց կիրթ ճաշակին յարմար չեն գտներ պարզ ձկնորսի մը խրճիթին մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը: Բայց ի՞նչ ընենք. մարդկային սիրտը ամենուրեք միեւնոյն է, և մեզ այնքան վիշտ կ'ազդէ խեղճ նաւավարի մը ցաւը, որքան կ'ազդեն անոնց ցաւերն որք տուրեւոյթս բաղդին սիրելի զաւակներն կը համարուին: Եւ յետոյ, կը գրենք ամենուն համար. ուստի մեր կիրթ ճաշակի տէր ընթերցողը այս յայտարարութենէն օգուտ քաղելով կրնան այս թերթերն առանց կարգալու անցնիլ: Աւելցնենք որ ոմանց խրա-

տին անսպով մի քիչ բարեփոխեցինք խօսակցութեանց լեզուն, չեղելով բնականէն: Ուրեմն չարունակենք մեր պատմութիւնը: Հարսը և Մաքրիկ իրենց հիւրին հետ միասին վեր ելան: Թագուհիի դէմքին վրայ բարութիւնը կը փայլէր: Կարմիր այտերով, սեւ մազերով քաղցրահամբոյր կին մ'էր:

— Ի՞նչպէս էք, աղէ՞կ էք, ի՞նչ կ'ընէք:

— Ի՞նչ ընենք, մեր վիճակը յայտնի է:

— Աստուծոյ կամքը այսպէս է, զաւակներս, ի՞նչ ընենք: Նիկողոս աղան ո՞ւր է:

— Վար իջաւ, քիչ մը ժամանակ անցընէ:

Մաքրիկ գնաց սուրճ եփելու, հարսն ալ եկաւ Թագուհիի շուրջ վերցնելու:

— Շիտա՞յ կուգաս Խատի գեղէն.

— Շիտակ կուգամ:

— Աս ծովուն ի՞նչպէս եկար:

— Ի՞նչ ընեմ, ամիս մ'է տունէն լուր մը չունիմ. ձեզի համար ալ սիրտս կը հատնէր. աղէկ լուրեր բերի ձեզի: Մերիններէն ալ լուր մը ունի՞ք:

— Բոյրդ երէկ հոս էր, աղէկ են, բան մը չունին:

Ակսան խօսիլ իրենց վիճակին վրայ:

— Ա՛խ, քուրուկ, դուն օտարական չես. մեր վիճակը գիտես. չենք գիտեր ի՞նչ ընենք. բերաննիս չբացուիր:

— Աստուած ողորմած է, Աստուծոյ ողորմութիւնը մեծ է, ի՞նչ ընենք, աղջիկս, ես ալ քանի տարիէ սեւերը չեմ հանած: Մաքրիկիս համար ձայն մը կա՞յ:

— Անոր ալ ուզող մը կայ:

— Ո՞վ է.

— Կարապետը:

— Սա՞, Հաճիկն տղա՞ն:

Այս միջոցիս Մաքրիկ սուրճը կը բերէր:

— Բան մը ըսե՛մ, ես ատոր հա՛ չեմ ըսեր. ասանկ աննման աղջիկ:

Մաքրիկ կարմրեցաւ, ամօցաւ: Բայց եւ այնպէս ժպիտ մ'ունեցաւ: Եղբոր մահուանէն ի վեր առաջին ժպիտն էր: Այնքան մեծ է անձնասիրութեան ոյժը որ կըրնայ պահ մը մոռցնել տալ ամենէն խորին վիշտն ալ:

— Ես Մաքրիկս Խատիգեղ պիտի կարգեմ:

— Խնդալու բաներ մի՛ ըսեր. մենք ո՞վ, Խատիգեղ հարս տուողը ո՞վ:

— Կը տեսնես, կը տեսնես: Ես ձեզի ա-

ղէկ լուր եմ բերեր ըսի : Թող քիչ մը մեծ-
նայ , քիչ մ'ալ ստակ վաստկի :— Այս վերջի
խօսքերուն վրայ չեշտեց :

— Ընտոր վաստկի . ամէն բան ձեռքէն
կուգայ , դուն գիտես . մեր մեղքէն է որ
կար մը բան մը տուող չկայ :

— Նայէ՛ , կը վաստկի թէ չէ : Մեր հա-
նձմին խօսեցայ . իր կարերը օտարներուն
տալու տեղ թող հայուն տայ : Աննման սիրտ
մը ունի , խօսքէս դուրս չելաւ : Մաքրիկս ու-
ղեց իր ըով կար կարելու , մէկտեղ նստե-
լու : Հիմա հասկցա՞ր : Քանի մը ամիս թող
կենայ , նայէ ի՞նչ կ'ըլլայ . բան ալ կը սոր-
վի , ստակ ալ կը վաստկի , ձեզ ալ կը պահէ .
հանձման անիկա կը կարգէ ալ :

Այս առաջարկութիւնը կ'երեւի թէ շատ
անհաճոյ չեղաւ :

— Ի՞նչ կ'ըսես , Մաքրիկ , հարցուց հարսը :
Բայց Պետիկ պատասխանի ստեն չձգեց
և լալով վազեց .

— Զէ՛ չէ՛ , ես հօրաքոյրս չեմ ձգեր :

Թագուհին Պետիկին ձեռքէն բռնեց ,
քովը առաւ նստեցուց , քիչ մը շաքար տը-
ւաւ գրպանէն և լեցուց : Ինչ հաստիկ մէջ
ալ գտնուին մարդիկ , հինգ տարեկան թէ
յիստուն , կան պարագայներ յորս բնու-
թիւնը անխօսիս է : Ոմանց համար շաքարի
մը կտոր , ոմանց համար ուրիշ շահալիտա-
կան փորձանք , խիղճը կը լռեցնեն և շատ
համոզումներ փոփոխել կ'ուտան :

Այս միջոցին դուռը զարկին , Նիկողոս
աղբար եկաւ : Իրենք ալ իրենց վիճակին
համեմատ քաղաքավարական փոխանակու-
թիւններն ընելէ վերջ , հարսը ձկնորսին ի-
մացուց Թագուհիի առաջարկութիւնը :

Նիկողոս աղբար ձայն չհանեց : Աղջի-
կէն բաժնուիլ չէր ուզեր , բայց անօթու-
թիւնը եթէ գայլը լեռնէն վար կը բերէ ,
տատարակն ալ բոյնէն դուրս կը հանէ . այն
հզօր աղղեցութիւնն է որոյ առաջ ամէն
ամուր պարիսպ , ինչպէս ամէն գորովալիւր
սիրտ կը խոնարհի : Նիկողոս աղբար վեր-
դոված էր : Բայց ի՞նչ ընէր :

— Աղջիկս , ըսածդ ըլլայ . իմ վիճակս յայտ-
նի է , երկու փարս չեմ կրնար վաստկիլ ,
աս խեղճերը ի՞նչ պիտի ըլլան : Աստուած
բարին տայ :

Ապրիլի 28ին երկուշաբթի առաւօտ Նարըր
— Գաբուի համար նշանաւոր օր մ'էր , — մեծ

պատահար կար : Մաքրիկի երթալուն լուրը
ամէն կողմ տարածուած էր , ամէնքն կը սի-
րէին այդ աղջիկը . ուստի երկուշաբթի ա-
ռաւօտ բոլոր դրացիներն — դրացնութեան
մէջ կրօնքի և սեռի խտրութիւն չկայ կ'ը-
սեն — ժողոված էին Նիկողոս աղբօր տունը :

Մնաք բարովները սրտաշարժ եղան ,
կարծես թէ հեռաւոր բաժանում մ'էր :
Սակայն այս խեղճերը դրագէտ չեն , հե-
տեւաբար սրտի յուզում կեղծելու տխուր
հարկին մէջ չէին , ամէն ինչ բնական էր :
Ամէն յիշատակներ կը վարթնուին իրենց
մտքին մէջ : Լացին :

— Ա՛լ ձեռք կուտայ , ա՛լ ձեռք կուտայ ,
ըսաւ Թագուհին : Աղջիկը դուրս տեղ կ'եր-
թայ , ետեւէն լալը խէր չէ :

Այս ըսելով Մաքրիկին թեւէն բռնեց և
դուրս ելան . տնեցիք պագտուեցան անոր
հետ և Մաքրիկ մեկնեցաւ տունէն , բոլոր-
ովին սեւերու մէջ : Պատուհանները լեցուն
էին , ամէն ոք խօսք մը ունէր ըսելու :

Հարսը չմոռցաւ յանձնարարել որ Ս. Յով-
հաննէս երթան մօմ մը վառելու : Այսպիսի
յանձնարարութեան հարկ չկար : Այս նախա-
զգոյշ միջոցը ձեռք պիտի առնէին արդէն :
Գացին մօմը վառեցին , աղօթքնին ըրին . —
ճամբորդութեան ժամանակ աղօթք մը միշտ
այն նշանակութիւնը ունի ինչ որ ապահո-
վագրական ընկերութեան մը յանձնուած
կեանք մը կ'ունենայ : Գնացին նաւախա-
տոյց , նստան նաւակ մը և անցան Դիմաց ,
այսինքն Գատը գիւղ :

Գ.

Նրիւ երեք շաբաթներ էին յորմէ հետէ
Մաքրիկ Գատը-գիւղ էր , Գրիգոր էֆէնտիի
տունը : Գիւղը , բնակարանը , սովորոյթներն
այնքան տարբեր էին մինչեւ ցայն վայր իւր
տեսածէն , որ խեղճ աղջիկը կարող չէր հա-
ւատալ թէ աշխարհիս մէջ կրնար այդպիսի
բան մը լինիլ : Մնած օրէն ի վեր դրեթէ
միշտ սուգ տեսած էր . այժմ խաղաղ ու
հանդարտ լռութեան մէջ , կեանքէն համ
կ'առնուր . կ'զգար թէ ասլիլը շատ անուշ
է երբ մարդ բան մը կը վայելէ աշխարհի
մէջ :

Գրիգոր էֆէնտի , ինչպէս սովորութիւն
է — ժամանակէ մը ի վեր լսել , « աղգային ե-
րեւելի վաճառական » էր և կը պատկանէր

այն Ահսարացւոց որք Հայոց դրամական հը-
րապարակին վրայ թէպէտ յաջորդած են ա-
միրայներու, սակայն կը ջանան իրենց չէնքը
հիմնել աւելի հաստատ հիմանց վրայ: Այդ
Ահսարացիներն պաշտօնաւոր են քաղաքակր-
թութեան պէտքը, բայց անոնց մի մասն
կ'ուզէ որ այդ քաղաքակրթութեան մէջ որ-
քան կարելի է առատօրէն պահպանուին
հայրենական աւանդութեանց նշխարներն:
Մասնաւորապէս հոգ կը տանին որ իրենց
կարգ մը տնտեսագիտական գաղափարներն
— որք շատ անգամ « խնայողութիւն » բա-
ռին քաղցրալուր հնչանը կ'ապաստանին, —
անվտանգ պահպանուին այդ քաղաքակր-
թութեան մէջ: Ահսարացւոց այս « յառա-
ջագիտական կուսակցութիւնը » որ « ո՛չ պահ-
պանողական է, ո՛չ ալ արմատական », ան-
հրաժեշտ հարկ տեսած է՝ իւր նպատակին
իրագործման համար՝ հեռանալ « ապական-
եալ » կեդրոններէ: Առանձնացեալ Մարմա-
րայի եզերքներն, անդ կ'ուզէ հիմնել այդ
նոր քաղաքակրթութիւնը:

Սակայն ինչքան ալ ճարտար միջոցներու
գիտեն որպէս զի շատ շահեման նախնի
աւանդութիւններէ, բայց և այնպէս պատ-
մութիւնը իւր անողորմի օրէնքներն ունի:
Հայոց համար պատմական օրէնք մ'է կա՛մ
պինդ գրկել կուրօրէն ամէն աւանդութիւն,
կա՛մ բոլորովին մոռացութեան տալ զայնս:
Կարծես թէ մեզ համար չկայ միջին ճանա-
պարհ: Ո՛չ մի ազգի մէջ գուցէ այնքան ըզ-
գալի լինի հօր և զաւկի գաղափարաց մի-
ջեւ գոյացած տարբերութիւնը որքան առ
մեզ:

Այս ճանարտութեան զգալի ազդեցոյցը
կուտային Գրիգոր Էֆէնտիի զաւակներն:
Վահրամ և Գոհարիկ երբ կը ճեմէին Մէօ-
հիւրտարի պարտէզներու մէջ, խօսելով
մերթ ամենամարտէ հայերէն մը, մերթ-
լու Ֆրանսերէն, գծուար պիտի լինէր Ահ-
սարիայէն նոր եկող աղայի մը համար գու-
շակել թէ՛նօքա զաւակներն էին իւր հայրե-
նակցին, Գրիգոր Էֆէնտիի, որ միշտ միեւ-
նոյնն էր, և կը խօսէր տաճիկերէն մը փառա-
զարդեալ իւր հարց չեղտերով: Չեմ ուզեր
ուրիշ մեծ խնդրոց նկատմամբ յերեւան ե-
կած տարբերութիւններն մէջ բերել և կը
բաւականանամ յիշեցնելով թէ մինչեւ ցայսօր
խռմը մը կանանց մէջ կը փնտռուի տակաւին

Գոհարիկ հանգուցեալ կ'ինքնաբերաբար
է երբ մի քանի պատկառելի տիկնայք մերթ-
լու մերթ ժողովելով կ'անիծեն իրենց մանչ
զաւակաց դէմ լարուած դարաններն պոսեցի
աղջկանց ու կանանց կողմանէ, և կը մկրտեն
այդ աղջիկներն, այդ կիներն այնպիսի շնոր-
հափայլ ածականներով զորս անշուշտ աստ
առաջ բերելու համար մի քիչ գրական խըղ-
ճահարութիւն կ'ունենանք: Գրիգոր Էֆէն-
տիի տիկնին արժանընտիր պետ մ'էր այդ
յարգամեծար խռմին, և թէպէտ մինչեւ
ցարդ իրեն յաջորդներ ընտրուեցան, բայց
իւր տաղանդին ոչ ոք հաւասարած է: Գո-
հարիկ իւր վրայ դրուած յոյսերն ի դերեւ
հանեց և մօրը բարեկամները շատ խոփո՛ւ
աչօք կը նային անոր երեսը, Մենք կրնանք
ըսել հին ոճով խօսելով — և եթէ այս բա-
ցատրութիւնը նախատինք մը չեն համարիր
մեր աղջիկներն — որ Գոհարիկ հրեշտակ մ'էր
և այնպէս է մինչեւ այժմ իւր ամուսնացած
վիճակին մէջ:

Գոհարիկ այնքան աղնիւ էր որ օր մ'իսկ
զգալի ընել չտուաւ Մաքրիկին թէ նա տան
մէջ կար կարող աղջիկ մ'էր: Բայց չէր կըր-
նար զսպել թեթեւ ժպիտ մը Մաքրիկին ան-
մեղ շարժումներու և խօսքերու մասին:
Այլ Մաքրիկ շուտ վարժեցաւ իւր նոր
կեանքի բազմակնճիւռն գծուարութեանց,
որոց մէջ էին դանակ մը, պատառաքաղ մը
վայելուչ կերտով գործածելու խնդիրներն:
Գոհարիկ դրեթէ առանձնացեալ կեանք
կ'անցընէր, նշանուած էր, նշանածը կը սիրէր
Մաքրիկին նման աղջիկ մ'ալ քովն ունենալը
ախորժելի եղաւ իրեն: Ժամանակի մեծ մա-
սը կարի նուիրուած էր: Նշանուած՝ աղջիկ-
ներն շատ գուրդուրանօք կը հսկեն իրենց
օժիտի պատրաստութեան, վասն զի իրենց
կանոցի փառասիրութեան պաշտօնական ա-
ռաջին ցուցահանդէսն է այն:

Վահրամ ալ շատ քաղաքավարութեամբ
կը վարուէր Սամաթիացի աղջկան հետ և
կրնանք ըսել թէ մինչեւ իսկ ընտանի լինե-
լու չափ յառաջ կ'երթար: Այս երիտասար-
դը քսան երկու տարեկան կար, բաւական
սիրուն էր, երկայնահասակ, խարտեալ,
բայց դէմքէ ճանջցողներն կրնային ըսել թէ
ըստ բաւականի սկեսպտիկեան էր: զբօսան-
քի մէջ չափազանց խղճի մտօք շարժիլն իւր
կենաց կանոնը չէր: Մենք չենք զարմանալ

եթէ այդ տասն և վեց տարեկան, մեծ աչքերով, սեւ մազերով, միջահասակ, ազնոր աղջիկը Վահրամի փորձութիւնը շարժեց: Հեղինակ կին մը ըսած է, հաւանօրէն ամէն անգամ փորձն իւր վրայ ընելով, թէ՛ սէրը կը ծնի երբ այդ մը և կին մը առաջին անգամ իրարու կը հանդիպին: Նեթ այդ վայրկեանը առանց փոփոխութեան, կրնան ապահով լինիլ թէ այնուհետեւ հարկադրեալ չեն զիրար սիրելու: Ահա կտրժիք մը որոյ ճանարտութիւնը փորձել կը յանձնարարենք մեր ընթերցողաց: մենք այսչափ կրնանք ըսել թէ մեր սեռը ամէն անգամ որ զգացում մը կ'ունենայ կնոջ համար, պէտք չէ սէր անուանել այդ զգացումը: Արդարեւ Վահրամ առաջին անգամ որ Մաքրուհին տեսաւ, հաճոյք մ'զգաց: բայց միթէ այդ հաճոյքը սէր անուանել կրնա՞նք մկրտել: Իսկ անմեղ Մաքրիկը բոլորովին տարբեր դրութեան մէջ էր: Ինչ է սէրը. այդ բառը անծանօթ էր այդ աղջկան որ և ոչ իսկ պարզ ընթերցանութիւն մը գիտէր: Բայց սակայն զգացում մը արտայայտող բառը եթէ մեզ անծանօթ է շատ անգամ, ուր չնշանակել թէ զգացումը գոյութիւն չունի ի մեզ: Սիրոյ ըզգացումը Մաքրիկին սրտին մէջ տիրապետող զգացումն էր: Մաքրիկ այդ սէրը առատօրէն կը շնայէր իւր հօրը, հարսին, եղբորորդւոյն համար: Իսկ այժմ հոգւով ու մարմնով նըւիրուած էր Գոհարիկին, այնքան այդ աղջկան ընթացքը խոր տպաւորութիւն մ'ըրած էր իւր պարզ սրտին վրայ: Անձնուէր լինելու ամէն յատկութիւններով օժտուած էր ձկնորսին աղջիկը, և երբ Վահրամ իւր քաղաքավարական բացատրութիւններն միացնելով իւր ասպետական շարժմանց յարձակում կ'ընէր այդ անմեղին վրայ, վստահ էր թէ յաղթանակն իրենն էր: Մեր դրութեան շրջանակը չներեր մի առ մի և երկարօրէն պատմել այն ամէն ճարտարութիւններն զոր Վահրամ ի դորժ կը դնէր անտարբեր եղանակաւ մը, այնքան անտարբեր որ կարծես իւր ամէն ըսածը քնական էր: Մեծարանաց խօսքեր առ մի անխորժ աղջիկ՝ յաղթանակի գլուաւական են: Բայց երբեմն Վահրամի խօսքերն մինչեւ անխոհմտութեան սահմանագլուխները կը հասնէին: Օրինակի համար, որ մը կը խօսէին իրենց մերթ ընդ մերթ հիւր եկող մի քանի երիտասարդներու ամուսնութեանց

վրայ, Մաքրիկ ալ կարծիք կը յայտնէր—սկըսած էր վարժութիւն ունենալ կարծիք յայտնելու: — Բայց, ըսաւ Վահրամ, բան մը կայ զոր չեմ կրնար ըմբռնել. ինչպէս կարելի որ երիտասարդ մը օրիորդ Մաքրիկն անգամ մը որ տեսնէ, ալ այնուհետեւ կարող լինի ուրիշ մը սիրել և ուրիշ մը հետ ամուսնանալ:

Նեթ այս մեծարանաց տրիտուրը ընծայուէր սրահներու մէջ մեծցած աղջկան մը, սա քամակը մի քիչ խոնարհեցնելով կը գոհանար. բայց Մաքրիկ այս արարողութեանց անվարժ էր տակաւին, և միայն շառագուռնեցաւ: Երեսներուն կարմրութիւնը այնքան զգալի եղաւ որ Գոհարիկ չիմացաւ եղբորը յանդգնութեանը, և Ֆրանսերէն յանդիմանեց զինքն ըսելով.

— Յիմա՞ր ես, ինչ ես, ինչո՞ւ համար խեղճ աղջկանը այդպիսի խօսքեր կ'ընես: Վերջը չե՞ս մտածեր:

Չէ, վերջը շատ լաւ կը մտածէր. այսպիսի պարագայներու մէջ ինչ որ երիտասարդ մը կ'ըսէ ամէն անգամ թեթեւութեամբ չարտասաներ բառերը: Վահրամի միակ պատասխանը եղաւ երթալ դաշնակին առջեւ և նուազել «Մեթէլայի» մէկ կտորն, մին այն կտորներէն, որք աղջկան մը սիրտը վեր ի վայր կ'ընեն, մինչեւ անգամ երբ չգլուխուր երիտասարդի մը հրաբորբոք սլաքներու ազդեցութեան ներքեւ:

Մաքրուհի քովի սենեակն անցաւ. շատ յուզուած էր, բայց գոհունակութիւն մը կ'զգար:

Դ.

Յունիսի իրիկուն մ'էր. Գրիգոր Էֆէնտի ճաշի չէր եկած. սեղանին միայն Գոհարիկ, Վահրամ և Մաքրիկ ներկայ էին. շատ զլարճանալով ճաշերին ըրին և գինին մի քիչ չափն անցաւ: Վահրամ գլանիկ մ'ալ հրամայուց Մաքրիկին որ իւր զբօսանք բերանը առաւ, քիչ մը ծխեց և ետ դարձուց. բայց մէկ վայրկեանը կը քաշէր որ զինուոյ ազդեցութիւնը սաստկանար: Սեղանէն վերջ, Գոհարիկ դաշնակին գնաց, իսկ Մաքրիկ պարտէզ իջաւ. գլուխը քիչ մը կը դառնար, և նստարանի մը վրայ ինկաւ: Հաղիւ տասը վայրկեան կար որ հոն էր և ահա ծառերուն ետեւէն ձերմակ չուք մը երեւ-

ցաւ . Մաքրիկի սիրտը ուժով կը բաբախէր : Վահրամ ամբան ձերմակ զգեստ մը վրան , գլանիկը բերանը և կամաց կամաց երգելով , անդ կուգար :

— Ա՛, դու հո՞ս ես , ըսաւ Մաքրիկին , իբր այն թէ չէր գիտեր :

Դէմը կանգ առաւ :

— Ի՛նչ աղւոր գիշեր է , այնպէս չէ՞ :

— Շատ աղւոր , մանաւանդ լուսնկան :

— Բայց ոչ քեզմէ աւելի աղւոր :

— Կ'աղաչեմ , Վահրամ պէ՛յ , ինծի այդպիսի խօսքեր մի՛ ըներ . չես գիտեր ի՛նչ կ'ըլլամ , մեղքցիր դիս :

Այդ չեղած , այդ լեւզու՛լ արտասանութիւնը պարտութեան ապացոյցն էին , Վահրամ ըմբռնեց թէ Մաքրուհի իւր անձին տէրը չէր այն վայրկեանին . քովը նստաւ և աջ ձեռքը անցուց Մաքրիկի ուսին . աղջիկը դիմադրութիւն մ'ըրաւ չափ տկար . արդէն իւր գլուխը խոնարհած էր Վահրամի շրթանց առաջ : Կը վայելէր առաջին համբոյրներու հեշտութիւնը , հեշտութեանց քաղցրագոյնը , որոյ յիշատակը չի ջնջուիր երբեք մեր սրտերէն :

Վահրամ աջ ոտքը ձախին վրայ դրած էր , Մաքրիկ խոնջ գլուխը կը հանդէպէր Վահրամի ազդերուն վրայ . Վահրամի մարմնոյն տաքութիւնը և Մաքրիկի երեսին տաքութիւնը միմեանց խառնուած էին :

— Մաքրի՛կ , հոգի՛ս , կը խոստանամ խն ըլլալ , քեզ հետ ապրինք , քեզ հետ մեռնինք :

Մաքրիկ մէկ պատասխան ունէր . բացաւ բազուկներն և ուժով գրկեց Վահրամի :

Գիշերը շատ աղւոր էր . տաքուկ օդ մը կար . աստղերը կը սլալային . ծաղկանց բուրումը զմայլում կ'ազդէր . աւազանին մէջ գորտերու ոստոստման ճողփիւններն կը լըսուէին . Գոհարիկ կը նուազէր դաշնակաւ Վէրտի մէկ հեշտալուր կտորը . Թրաշխի վերջի նուազումն էր .

Մնաք բարով դուք անցելոյն

Գեղածիծաղ երանքերն ,

այն նուազներէն որ մարդուս սիրտն ու հոգին կը փոխադրեն մի ուրիշ աշխարհ , և կ'ըսեն . « Կեանքը եթէ տխուր է , բայց և այնպէս սիրելու է դայն » :

Ա՛հ , Մաքրուհին հիմա՛ կը սիրէր կեանքը , երբ սիրուն երիասարդի մը տաք համ-

բոյրներովը ծածկուած էին իւր երեսները : Կը սիրէր կեանքը , բայց իւր տէրը չէր : Մոլութիւն գինւոյ , մոլութիւն ծովի , մոլութիւն համբոյրներու , մոլութիւն աղւոր գիշերուան մը , ո՛վ երբեք կարող է տրամաբանել ձեր ներկայութեանը : Վահրամի ակուայներն իրարու կը վարնուէին , ոտքերն , ամբողջ մարմինը կը դողային այն դողումով , զոր ամէն ոք կ'զգայ երբ կը գտնուի ի խորոց սրտի տենչացեալ կնոջ մը ներկայութեանը :

Վահրամ վերցուց իւր դրկացը մէջ Մաքրիկը . իւր ջլապինդ բազուկներն այնքան ուժով կը սեղմէին աղջկան մարմինը որ ոսկրներուն ձայնը կը լսուէր . խոր լուծեան մէջ լսելի էին միայն Մաքրիկի հեծկտանքները որք կ'ընկերանային Վէրտի շեշտերուն . էին այն հեծկտանքներն զոր աղջիկ մը չի փոխանակէր ո՛չ մէկ ուրախութեան ձայնի հետ : Եթէ տակաւին հին գրականութեան գողտրիկ լեզուն գործածական լինէր արդի սովորութեանց մէջ , պիտի ըսէինք , « Մաքրիկի անմեղութեան հսկող պահապան հըրեշտակը իւր դէմքն սքողած մեկնեցաւ այդ պարտիզէն » : Թո՛ղ մեկնի այդ հրեշտակը , Մաքրիկի համար վայրկեան մը հեշտութիւն երջանկութիւն էր , և այդ կը բաւէր :

Գոհարիկ կը շարունակէր իւր նուագները . յանկարծ դադրեցուց և պատուհանէն իւր յտակ ձայնովը կանչեց .

— Վահրամ , ո՛ւր ես :

— Ի՛նչ կայ , հոս եմ :

— Դուրս կ'ելնե՞ս :

— Ինչո՞ւ չէ :

Ժամանակն էր : Երբ զօրաւոր սեռը կը վայելէ կին մը , որոյ նկատմամբ մարմնական ցանկութիւն և եթ ունի , իւր ամենէն մեծ աճապարանքն է որչափ հնար է չուտով մեկնիլ : Եւ սակայն ամենադժուարին գործ մ'է կնոջ ձեռքէն ճողալը : Վահրամ շատ գոհ եղաւ քոջը հրաւերէն . դրօշմեց Մաքրիկի երեսներուն համբոյր մը , — շատ տկար համբոյր մը — և աներեւութացաւ :

Ե.

Այդ գիշերուան յաջորդ օրն Մաքրիկի վրայ անբացատրելի ծանրութիւն մը կար . Անուշ մեղամաղձութիւն մը պատած էր դէմքը :

— Ի՛նչ ունիս , կը հարցնէր Գոհարիկ :

— Ոչինչ, գլուխս կը ցաւի :

Գոհարիկ դողդողիկ կերպով ձեռքը ձակտին կը դնէր :

— Քիչ մը տաքութիւն ունիս, կ'ըսէր, և Օ րը Քոլէի շինն հանելով ճակատը կը զովացընէր :

Կանցնի ճակատին տաքութիւնը, բայց ո՞վ պիտի զովացնէ սիրտը : Այդ օրն եւ յաջորդ օրերն կ'զգուշանար Մաքրիկ Վահրամի երեսը նայելէ, բայց և այնպէս աչքը դուռն էր, կ'սպասէր անհամբեր նորա դալտտեանը, և երբ ներս կը մտնէր նա՝ իւր սիրտը կը տրոփէր :

Գլուխը կախած, Մաքրիկ կը կարէր ու կը կարէր, լռիկ մեծիկ : Երբ ծանր մտածութիւններ կ'ունենանք, այնպիսի մտածութիւններ որք թէպէտ զմեզ տաղնապի մէջ չեն պահեր, բայց և այնպէս ներքին վրդովում մը ունինք, այս պարագայից մէջ հանդարտութեան մեծ անպատանն է աշխատութիւն մը որ մտաւոր յողնութիւն չպահանջեր, և քիչ թէ շատ մեքենական լինելով, կը թոյլատրէ մեզ մեր մտածութեանց մէջ ընկղմիլ : Կը կարէր Մաքրիկ ու կ'երազէր : Երազը կեանքի մեծ մխիթարանքն է . բայց երբ երազն իրականութեան կերպարանը կ'զգենու՝ կը կոշուի երջանկութիւն : Ուրեմն Մաքրիկ երջանիկ էր . մի քանի շաբաթէն Վահրամի կինը պիտի լինէր : Որչափ կը սիրէր Վահրամը, ինչե՞ր պիտի չընէր զնա երջանիկ ընելու համար : Կը շինէր, կը պատրաստէր իրենց կենաց յատակագիծը . չէր մոռնար հայրը, հարսը . ա՛լ անոնք այսուհետեւ հանդիստ պիտի ընէին . իրաւ է թէ ընկերական զիրքը չէր ներեր որ անոնք ալ իրեն հետ բնակին . արդէն հանգիստ ալ չեն ըլլար . բայց ինքն անոնց ամեն պէտքերը պիտի հոգար : Պետիկը գիշերօթիկ դպրոց մը կը դնէր, ուսկից ելնելէ յետոյ Վահրամի վաճառատունը կը մտնէր և անպարակոյս ձկնորսին թուր օր մը կը լինէր կանոնաւոր վաճառական մը :

Բայց այս ջինջ ու պայծառ հորիզոնին վրայ սեւ կէտ մը միայն կը տեսնուէր : Մաքրիկ կ'զգար թէ իւր տգիտութիւնը իրեն համար դառն սարագայ մ'էր : Ո՛չ դաշնակ գիտէր, ո՛չ Ֆրանսերէն, ո՛չ հայերէն, եւ անտարակոյս Վահրամի պէս երիտասարդի մը համար պատուարեր կին մը պիտի չլինէր :

Սակայն Վահրամ արդէն գիտէր Մաքրիկի այս վիճակը, հետեւաբար դժգոհութիւն չունէր : Բայց այն նրբամտութեամբ որ կանանց յատուկ է, կ'զգար Մաքրիկ թէ ուշ կամ կանուխ Վահրամի և իւր միջեւ ցրտութեան առիթ մը պիտի լինէր իւր տգիտութիւնը : Բայց ինչո՞ւ երկնչիլ : Անմիջապէս կ'սկսէր աշխատիլ . կ'զգար թէ իւր գլուխը բարակ է և մեծ աշխատութեամբ, սիրոյ միտքակին ներքեւ, ոչ շատ ուշ կրնար ձեռք բերել կրթական այնպիսի վիճակ մը որուն նա խանձէին շատ ուրիշ կանայք :

Շաբաթ մ'էր արդէն որ այս քաղցրիկ մտածմանց մէջ կ'անցընէր իւր օրերը . Թահուհի, բարի կինը որ զինքն բերած էր Գրիգոր Էֆէնտիի տունը, երկու շաբաթէ ի վեր Սամաթիա գնացած էր և այն շաբթուն վերջերը վերադարձաւ . շատ ալ յարմար ժամանակին եկաւ : Մաքրիկ որչափ ալ երջանիկ էր իւր երազներուն մէջ, բայց և այնպէս այդ երջանկութիւնը կատարեալ ընելու համար հարկ էր որ սիրտը մէկուն բանար և մէկտեղ խորհրդակցէին, այս պարագային մէջ միայն Թագուհին կրնար իւր սրտակիցն ըլլալ, բայց և այնպէս կը յետաձգէր իւր խոստովանութիւնն ընել, անշուշտ ոչ ամբողջապէս :

Թագուհին դաէն մի քանի օր վերջ, ա՛լ Մաքրիկ հաստատ որոշեց խօսքը բանալ . ուստի իրիկունս մը դէմ անոր քով գնաց այն պզտիկ խցիկին մէջ որ սուրճ եփելու յատկացած էր : Թագուհի և Մաքրիկ կենդանի պահած էին Պոլոյ ընտանեկան այն սովորութիւնը, որոյ համեմատ կանայք իրիկունս դէմ անպատճառ պէտք է սուրճ եփեն եւ հաց թաթխելով ճաշակեն : Այդ իրիկուն ալ Թագուհի և Մաքրիկ սուրճերին կը խմէին հաց թաթխելով : Մաքրիկ խօսքը պիտի բանար, բայց վայրկեանէ վայրկեան կը յետաձգէր : Թագուհի այս կացութեան վախճան տուաւ, երբ խնդալով ըսաւ, պատառք բերանը դնելով .

— Մաքրիկ, քեզ բան մը պիտի ըսեմ, բայց մարդու չսիրտի ըսես :

Մաքրիկ դող մը ունեցաւ, այն դողը որ ամենուս սիրտը կը գրաւէ, երբ կ'զգանք թէ մեզ պիտի հաղորդուի այն լուրերէ մին որոյ անձկանօք կ'սպասենք և որ մեծ ներգործութիւն պիտի ունենայ մեր կեանքի

վրայ : Մաքրիկ զգաց թէ Վահրամ խօսք բացած է արդէն Թագուհիին և ինքն ալ ազոր վրայ պիտի խօսի . ուստի առանց վարանելու խոստացաւ թէ մարդու բան չըսէր և ժպտելով ըսաւ .

— Ի՞նչ պիտի ըսես :

Բայց Թագուհի, գաղտնեաց պարկը բանալէ առաջ, Մաքրիկին մեծ երդում մ'ալ տուաւ, այն երդումներէն մին զոր բարեպաշտ կիները սովոր են գործածել, և զոր եթէ մենք աստ առաջ բերենք, անշուշտ Կրօնական ժողովոյ հետ վէճի կը բռնուինք, եւ այս միջոցիս ալ գլխու նոր ցաւեր չենք ուզեր : Մաքրիկ երդումն ընդունեց :

Ետք պիտի իմացուի, կ'ըսէր Թագուհի . բայց թող խօսքը մեզմէ դուրս չելլէ : Աղջիկ, ոտքդ խաբէ՞ : — Մաքրիկ ծիծաղեցաւ, եւ Թագուհի շարունակեց .

— Գիտե՞ս, Վահրամ պէյը կը նշանուի : Մաքրիկ առջեւը նայելով խնդաց . ի՞նչ ճարտարութեամբ Թագուհի խօսք կը բանար :

— Նայիմ որո՞ւ, հարցուց միշտ ժպտելով :

— Հարուստը հարուստին կը վայլէ . Միսակ էֆէնտիին աղջկանը :

Մաքրիկ այս անգամ չխնդաց : — Թագուհի միամտաբար ամէն ինչ կը պատմէր, ամէն ինչ մանրամասնօրէն . աղջիկը ոչինչ ըմբռնեց : Ահա ի՞նչ բառը զինքը գրաւած էր — Վահրամ կը նշանուի ուրիշ աղջկան մը . — այս բաւ էր : Թագուհին կրնար ապահով ըլլալ որ Մաքրիկ գաղտնապահ պիտի մնար, առանց անհղ երդման իսկ : Թագուհի խօսքը չէր աւարտած եւ Միսաք էֆէնտիի «աննման աղջկան» գովեստը կը շուայլէր, երբ Մաքրիկ գլխու ցաւը պատրուակ ընելով քաշուեցաւ իւր սենեակը : Դուռը դոցեց եւ բաղձոցին վրայ ինկաւ . շուտաւ կը մտածէր : Իրիկուան կերակուրի ալ չիջաւ, սեղանին վրայ Գոհարիկ կ'ըսէր .

— Չեմ գիտեր ի՞նչ ունի այս աղջիկը, քանի մը օր է կարծես թէ հիւանդ է՝ ի՞նչ է՞ . գլխու ցաւը կը բռնէ, մի՛ կարեր կ'ըսեմ, մտիկ չընէր :

Այս միջոցիս Մաքրիկ իւր մտածութեանց մէջ էր : Աղջիկ մը երբ կը զոհէ երիտասարդի մը ինչ որ ամենէն աւելի նուիրական է իրեն համար, կը կարծէ թէ իւր սիրոյն եւ անձնուիրութեանը ամենէն անհերքելի ա-

պացոյցը տուած է, ապացոյց մը զոր, աւա՛ղ, մեք երիտասարդքս կարող չենք տալ կանանց : Մաքին մէջ չէր սղմեր թէ Վահրամ, այն վեհանձն երիտասարդը (այս Մաքրիկին կարծիքն էր) կարող լինի այդքան վատութեամբ խեղճ աղքատ աղջկան մը կեանքը թունաւորել : Իւր մտածութիւններովը գըտաւ թէ Թագուհին սխալ խօսք մ'ըրած է, կամ իւր բերանը փնտուել ուզած է, սխալ մտածելն մը ընելով . կամ թէ Վահրամ, ո՛վ զիտէ ի՞նչ պատճառաւ, խաբած է Թագուհին : Մաքրիկը չենք մեղադրեր . կը ճանչնա՞ր աշխարհս :

Ամառը ամէն իրիկուն դուրս կ'ելնէին . Գոհարիկ եկաւ Մաքրիկի սենեակն հարցուց թէ ի՞նչ ունի, և պատասխան առաւ թէ բան մը չունի, բայց դուրս չենք : Գոհարիկ սենեակէն ելաւ, վեր գնաց հագուելու : Մաքրիկ այս առիթէն օգուտ քաղեց քովի սենեակն երթալ ուր Վահրամ նստած էր դաշնակին առաջ : Մեղմիկ մեղմիկ ներս մտաւ . Վահրամ գլուխը դարձուց և խնդալով ըսաւ . — Ա՛, դո՞ւն ես, Մաքրիկ :

Այդ ժպտին, այդ հարցման վրայ Մաքրիկ կարծես թէ նոր աշխարհ եկաւ . զգաց թէ ըսուածներն սուտ էին, հետեւաբար առանց վարանելու մօտեցաւ Վահրամի և խնդալով ըսաւ .

— Բան մը լսեցի, իրա՞ւ է :

— Ի՞նչ լսեցիր :

— Կը նշանուի՞ս եղեր :

— Որո՞ւ :

— Միսաք էֆէնտիի աղջկանը : (Մաքրիկ երդումը մոռցած էր) :

— Անտե՛կ խօսք մը կայ . ինչո՞ւ կը հարցընես :

— Հապա ես ի՞նչ ընեմ :

— Ինչ կ'ընես ըրէ . եթէ կ'ուզես քեզ ալ կը սիրեմ :

— Բայց պարտէ՛ղ անցուցած գիշերնի՛ս . ինձ տուած խոստումներդ, մոռցա՞ր :

— Է՛հ, անոնք կատակ էին, մենք անանկ կատակներ չատ կ'ընենք :

Վահրամ գլանիկը բերանը դրաւ, դաշնակը զարնել կը շարունակէր . Մաքրիկ բերանը չբացաւ . դուրս ելաւ, գնաց ինկաւ նստարանին վրայ, ճրագ չվառեց, դուռը դռցեց : Ամբողջ գիշերը լացաւ .

2.

Մաքրիկ առաւօտուն կանուխ անկողնէն ելաւ . արդէն ամբողջ գիշերը չէր քնացած գրեթէ . հագուեցաւ և գնաց Գոհարիկին սենեակը :

— Ես այսօր պիտի երթամ, ըսաւ . քանի եկած եմ չեմ գացած :

— Այս օգին ի՞նչպէս պիտի երթաս . գոյնդ ալ նետած է, հիւանդ ես ի՞նչ ես :

Օղբ լաւ չէր . երկինքը ամպեր կային և բարակ բարակ անձրեւ կուգար, կարծես Մաքրիկի տխրութիւնը աւելցնելու համար :

— Քանի մը գիշեր է գէշ երազներ կը տեսնեմ, այսօր շատ անհանգիստ եմ :

— Ե՞րբ պիտի գաս :

— Թագուհին այս օրերս պիտի գայ, մէկտեղ կուգանք :

Գոհարիկ այլ եւս չպիտի գար . դուրս ելաւ և հրամայեց որ ծառան պատրաստուի միասին երթալու . յետոյ ելաւ իւր սենեակը և վար իջնելով գնաց Մաքրիկին քովը, և քսակի մը մէջ գրած հինգ ոսկի տուաւ :

Բարի՛ Գոհարիկ, գիտէ՞իր թէ արեան գինն է որ Մաքրիկի կը վճարես :

— Մաքրիկ, այս քիչ է, բայց մնացածը պահած եմ . գիտեմ որ եթէ տուն երթաս ամէնը ծախս պիտի ընես, անոր համար մնացածը պահեցի . ետքը դուն ալ գոհ կ'ըլլաս :

Մաքրիկ ժպտաւ մ'ունեցաւ, շնորհակալ եղաւ . մնաք բարովը ըսաւ, առանց մոռնալով « Գրիգոր էֆէնտիին ալ ձեռքը կը պահենեմ » խօսքը : — Գոհարիկ ուղարկութիւն չըրաւ որ Վահրամի անունը չէր տար :

Դուրս ելաւ, սպասաւորը ետեւէն . երբ քիչ մը հեռացաւ, ետ դարձաւ, ակնարկ մը նետեց Գոհարիկ տանը, և թաշկինակը հանելով կամացուկ մը աչքերը սրբեց : Յոյս, սէր, անմեղութիւն, ամէն ինչ այդ ապարանքին մէջ թաղուած էր :

Իջան նաւամատոյց, մտան շողենաւ, ելան կամուրջ և անտի շուկայն ուր Մաքրիկ հօրը, հարսին, Պետիկի համար մի քիչ բան գնեց :

Ձեմ ուղեր երկար բարակ պատմել տան իրարանցումը երբ Պետիկ պատուհանէն նայելով իմաց տուաւ թէ հօրաքոյրն է : Ձիրար դրկեցին, զիրար համբուրեցին :

Այս կարգի ընտանիքներն եթէ դժբաղ-

դութիւն ունենան, սրտաճմիկ տեսարան մը կ'ընծայեն երբ իրենց անդամներէն մին կամ ուրիշ սիրելի մը բացակայութենէ վերջ դառնայ իրենց մօտ : Բաւական լացին . Նիկողոս աղբօր զաւկին մահուան յիշատակներն կը նորոգուէին : Բայց ամէն արցունք վերջ ունի . իրենք ալ սրբեցին իրենց աչքերն, խօսակցութիւններն սկսան : Մաքրիկ հետը բերածներն տուաւ ամէնուն . քովը գտնուած ստակն ամբողջ հանեց հօրը ձեռքը դրաւ :

Նիկողոս աղբօր վրայ լոյս իջաւ . խեղճ երուն քով ստակ մը չէր մնացած, շուարած էին : Ծերունին գլուխը բացաւ, եւ լալով սկսաւ օրհնէնք կարդալ Գրիգոր էֆէնտիին, աղջկանը, զաւկին որք այսպէս իրենց խեղճութիւնը կը մոռցնէին և անմեղներուն ապրուստը կը ճարէին : — Դա՛ն հեղնութիւն, դա՛ն հակադրութիւնք կենաց :

Հարսը անհամբեր էր, անկիւն մը քաշուեցաւ և սկսաւ խօսիլ Մաքրիկին հետ . պատմեց թէ քանի՛ հոգիներ հիմա գինքը կուգէին, և թէ անպատճառ պիտի նշանուի և այնպէս Գատը-գիւղ պիտի երթայ . թո՛ղ հարսնիքը ուշ լինի :

— Հոգի՛ս, վաղը մէկալ օր կը խօսինք, հիմա խելքս վրաս չէ, արդէն հիմա պիտի երթամ, այս գիշեր չեմ գար, վաղը կը խօսինք :

— Ո՞ր պիտի երթաս :

— Թագուհին բաներ մը ապստրեց տունը, այսօր պէտք է երթամ խօսիմ, խօսք տուի որ երթամ, ա՛լ գիշերը չեմ կրնար դառնալ . վաղը ցորեկ կուգամ :

Թագուհին անունը լսելով հարսը չդիմադրեց . բայց երբ դուրս ելաւ Մաքրիկ չուղեց որ Պետիկը հետը երթայ . — Մօտիկ է, կ'ըսէր, ծովեզերքէ կ'երթամ, ժամ պիտի երթամ, անկէ կ'անցնիմ :

Անձրեւը դադրած էր . արեւը մարը կը մտնէր . երեկոյեան հեշտ արեւ մը, շատ աղւոր իրիկուն մ'էր . ցօղաթուրմ ծառերէն անձրեւի կաթիլներ կը կաթկթէին . Ս. Յովհաննէս մօտ էր . գլուխը իւր քօղին մէջ պատած, Մաքրիկ դուրս ելաւ, անցաւ երկաթէ դռնէն և մօտաւ եկեղեցի :

Պոլսոյ մէջ չկայ եկեղեցի մը որ այնքան խորին տպաւորութիւն ընէ փափուկ և տխրած

հոգիներու վրայ որքան կ'ընէ Նաուր — Գաբուրի փոքրիկ եկեղեցին : Խոր լուծեան մէջ թաղուած՝ կարծես կղզեակ մ'է ի ծովու . մերթ ընդ մերթ ալիքները կուգան ընդհատել աղօթից միմունջներն, և յիշեցնել տառապեալ հոգւոյն, կեանքի պատկերներն . յուզում, վիշտ, փոթորիկ, հանդարտութիւն կը յաջորդեն միմեանց, և սակայն դիւրաբեկ նաւակներն օր մը այդ ալեկոծութեանց մէջ անհետ կը լինին : Մաքրիկ կ'զգար թէ ինքն ալ դիւրաբեկ նաւակ մ'է : Գնաց Մայր վշտակիո պատկերին առաջ, երկու ձեռքերուն մէջ առաւ երեսները և լացաւ : Ալիքները կը բաղխէին . ա'լ աչքերը սրբեց . մոլոր սկսած էր տիրել, պատուհանէն անգամ մը նայեցաւ . Գատը — գիւղ աչքին առջեւ կը սարդուէր, վերջալոյսի լուսովը դեղնած : Ահնարկ մը նետեց և դուրս ելաւ : Հանդիպեցաւ քարոզիչ վարդապետին, ձեռքը պառաւ, երկար չխօսեցաւ և սկսաւ ծովեզերքէն ընթանալ, յուշիկ յուշիկ . կարծես բոլորովին մթննալու կ'սպասէր :

Է.

Պատմութիւնը կ'աւանդէ թէ Ռոբերտայի ճակատամարտին առջի իրիկունը Քոնտէ խորքունով ննջեց : Նիկողոս աղբար ալ ննջեց այդ քունովը և փորձով ցոյց տուաւ թէ՛ հասարակ մահկանացուներն եւս կարող են բաղդակից լինիլ մեծ զօրապետներու, երբ իրենք ալ կարեւոր ծրագիրներ ունին յաջորդօրն ի դործ դնելու համար : Բայց արտեալ նունքն փակելէ առաջ, Նիկողոս աղբար բաւական տրթուն կեցաւ մահճին մէջ, վասն զի մտովին կը պատրաստէր ինչ որ սիրտի գնէր յաջորդ օրն : Առտուն կանուխ արթնցաւ . ամրան դեղադուարձ առաւօտմ'էր, օդը զով, թռչունները կը գեղգեղէին : Պատուհանին առաջ նստեցաւ Նիկողոս աղբար, հարսը և թուր քովը, և խօսեցին սուրճերնին. Նիկողոս աղբար սպասեց օր Մաքրիկը գայ, բայց տեսնելով թէ նա կ'ուշանայ, աւելի սպասելու համբերութիւնը չունեցաւ . պէտք էր որ իւր հարստութեան ցոյցերն չուտով տեսնուէին : Փոքրիկ քէթ մ'ունէր, զոր մէկ կողմ նետած էր շատ ժամանակէ հետէ — դաւկին մեռնելէն ի վեր — . գտաւ, առաւ, լեցուց, բերանը դրաւ, բիրն ալ ձեռքն առաւ, Պետիկն առջեւը ձգեց, և դուրս

ելաւ, երեք անգամ երեսը խաչակնքելով : Չմոռցաւ եկեղեցի երթալ, աղօթել Գրիգոր Էփէնտիի և ընտանեացն արեւչատութեանը համար . եկեղեցիէն շուկայ իջաւ կամաց կամաց : Մէկուն հետ կը խօսէր, միւսին հետ կատակ կ'ընէր . իւր ծանօթները վարմացած էին այս յանկարծական փոփոխման վրայ : — Խոչ կրնանք ըսել, մարդկային սիրտը առիթ մը կ'որոնէ միշտ որպէս զի մոռնայ ցաւերը և բերկրի . պարարտ քսակ մը, հանդարտ խիղճ մը, և հանդիստ ապագայի մը յոյսը մոռցնել կուտան շատ ցաւեր, և հնարաւոր կ'ընծայեն կորաքամակ ծերունիներու, ձեմել բարձր ի գլուխ : — Նիկողոս աղբար ուղղակի նպարավաճառին դնաց ուր երկու ոսկի մանր սուակի վերածեց, և պատրաստեց աման համար երկու ամսուան պարէն : Յոյն նպարավաճառը զարմացած էր, և դիմացի սրճարանէն տեսնելով Նիկողոս աղբար ընթացքն, եկան իրենց վարմանքն յայտնելու : Նիկողոս աղբար փառաւորուած էր : — Ունայնասիրութիւնը կարեւոր մասն կը կազմէ կեանքի հրապոյրներու : Մեծատուն թէ ձկնորս, կ'զգան անհուն գոհունակութիւն եթէ կարենան իրենց քսակի փայլովն շացընել զիրենք չրջապատողներու աչքերն : Այդ գոհունակութիւնը ունեցաւ Նիկողոս աղբար, և արժանի էր այդ մ, յետ այնքան վիշտերու : Երբ վերջացուց իւր գործը, նպարավաճառին խանութը, իջաւ դէպ ի ծովեզերք : Այն տեղ են ածուխ խանութներն և փայտի դեզերն : Բայց անոնց մօտենալէ առաջ, մտաւ ծովեզերքի սրճարանը . յոգնած էր — այնքան շուտ կը յոգնին առատալիր քսակի տէրերն — . սուրճ մը առաւ, Պետիկն ալ շաքար մը, եւ այս տրարողութիւններէ վերջ դարձաւ փայտի դէզին քով : Այցելեց մէկ երկու դէզեր . սակարկութիւններ կ'ընէր . մին կիսկատար կը թողուր միւսին կ'անցնէր . կը փափագէր ամէն ինչ լաւ շուտիւ : Այն ժամէն աւելի էր որ այս աշխատութեանց հետամուտ էր և այնքան դրած որ ուշադրութիւն չըրաւ թէ Պետիկը քովէն հեռացած էր, ուստի երբ չորս կողմը նայեցաւ Պետիկը չկար . աչքն ասդին անդին պտըտցուց, սկսաւ կանչել, վրդոված էր, մանաւանդ որ ծովուն եղերքը բազմութիւն մը խոնուած էր . սիրտը դող ելաւ, շուարեցաւ, « Պետիկ, Պետիկ, Պետիկ » կը պո-

ուար, և սկսաւ, ոտքերը դուրս դնելով, ծովերը երթալ. բայց յանկարծ հոգի առաւ. Պետիկ վազելով կուգար և ժամանակ չձգեց որ յանդիմանութիւն կրէ:

— Տեղե, տեղե, եկո՛ւր եկո՛ւր, նայէ ի՞նչ կայ, եկո՛ւր նայէ՛, բան մը կը բերեն ծովէն:

Հոգեբանները տակաւին չեն տուած իրենց վերջին վճիռը թէ՛ արդեօք կանայք աւելի՞ օժտուած են հետաքրքրութեան յատկութիւններով թէ ծերունիները: Արդարեւ ծերեր թէ այս վճիռը բաւական ուշ պիտի տրուի — եթէ երբեք տրուի —. բայց առայժմ սա ճշմարիտ է որ գոհ և հանգիստ վիճակի տէր մարդիկ ընդհանրապէս հետաքրքիր են. այսպէս էր նաեւ Նիկողոս աղբար ալ. հետեւաբար ամենայն սիրով ընդունեց Պետիկին հրաւերը և կը յառաջանար դէպ ի այն կողմը ուր բազմութիւնը կը խռնուէր: Բայց պէտք է յիշենք թէ երկու կարգի անձինք կան որք շատ եսական են, աւելի եսական քան թէ հետաքրքիր. այս կարգի անձինք են, ծանր հիւանդութենէ առողջութեան վերադառնալ սկսողք, եւ նոքա որոց դժբաղդութիւնը վերջ կունենայ եւ ծիծաղկոտ ապագայ մը կը պարզի իրենց առաջ: Այս վերջի դասուն կը պատկանէր տասն եւ հինգ ժամէ ի վեր մեր Նիկողոս աղբարն ալ: Տարօրինակ թող չթուի ուրեմն որ այնքան հապճեպով չէր քալեր, եւ մանաւանդ թէ կանգ առնելով, յոյն քահանայէ մը, որ դէմն ելաւ եւ իրեն ծանօթ էր, քթախոտ ուղեց, ուժով մը քաշեց եւ եսականութեան այս մեծ ապացոյցը տալէ վերջ, ծովեզրն սկսաւ երթալ:

Ճանապարհը հինգ վայրկեան կրնար տեւել, բայց եւ այնպէս Նիկողոս աղբար կարող չեղաւ համբերութիւնը բռնել, մէկ երկու հոգիներ տեսաւ որք կը վերադառնային այն կողմէն, անոնց հարցուց թէ ի՞նչ կար որ բազմութիւնը հոն կը խռնուէր:

— Իրաւ որ չենք գիտեր, կը պատասխանեն տաճկերէն, գործ ալ ունինք չենք կրնար սպասել: Չկնորսներն դիակի մը հանդիպեր են, ի՞նչ են ըրեր, կը քաշեն կը բերեն, կամ ձի ըլլալու է կամ կով. գնա՛, դուն ալ գնա՛, բան գործ չունեցող մարդու դործ բացուած է:

Ծերունին կուգէր ետ դառնալ, կովու,

ձիու դիակ շատ տեսած էր, մէկ քանիններն ալ բերելու ինքն ալ մասնակցած էր ժամանակաւ: Բայց Պետիկը խօսք չէր հասկընար, սկսաւ լալ, մեծ հօրը բղանցքներէն կը քաշէր, ուստի տղուն սիրտը չկոտրելու համար ա՛լ ետ չդարձաւ: Բազմութիւնը շատցած էր, կ'երեւար թէ կենդանիի դիակը ծովեզրն հանած էին, վասն զի ամէնքն պլուխներնին ծռած, ուշադրութեամբ գետինը կը նայէին, շատերն ալ իրարու ուսի վրայ կելլէին: Նիկողոս աղբար մտքէն կ'ըսէր թէ՛ ի՞նչպիսի մարդիկ ալ կան, կարծես թէ առաջին անգամն է որ Սամաթիայի ծովեզրերը կենդանիի դիակ կ'ընայ: Բայց այս մտածութիւններն ունենալով հանդերձ ինքն ալ կը ճեղքէր բազմութիւնը, այլ հողնութեամբ: Բազմութեան մէջէն մէկ երկու հոգիներ զինքը նշմարեցին, անխնայապէս աղաղակեցին (միշտ տաճկերէն) «Աղէկ եկար, դուն ճանչնալու ես» և զայս ըսելով ճանապարհին որ ծերունին դիակին մօտենայ:

Այս գերազոյն վճիռը շատ հաճոյ եղաւ Նիկողոս աղբոր անձնասիրութեան, ուստի գոռոզաբար կը յառաջանար. բոլոր Սամաթիոյ չճանչցածը ինք պիտի ճանչնար: Յաղթանակը մեծ պիտի ըլլար, եւ մտքէն անցուց թէ՛ այսուհետեւ որ աղջկանը չնորհիւ հանգիստ առեն պիտի անցնէր, գէշ չէր լիներ որ իւր պաշտօնակցաց համարումը գրաւէ, թաղական ընտրուի, ժամանակ անցընէ — չեմ կարծեր թէ երեսփոխանական աթոռի յաւակնութիւնը ունեցած լինէր այն վայրկեանին —. ուստի ամենայն վեհութեամբ առաջ անցաւ երբ բազմութիւնը իրեն տեղ տուաւ:

— Անկան մը դիակ է, կնկան մը դիակ է, նայէ, կը ճանչնաս, կըսէին տաճկերէն:

Նիկողոս աղբար մօտեցաւ դիակին, ուժով բռնած Պետիկին ձեռքէն որ չկորսուի. ծռեցաւ, նայեցաւ, շփոթեցաւ, կրկին նայեցաւ և աղէկ մը. կ'երեւի թէ տարակոյսի տեղի չմնաց: Գլուխը վեր վերցուց. ապուշի պէս աչքերը չորս կողմը պտտեցուց եւ լալով ինկաւ դիակին վրայ:

Մաքրիկի դիակն էր:

* * *

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՇԱՐԱՐԱՐԱԿԱՆ ԼՐՈՑ

1-7 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Աւերակները պէտք է իրար հետ դնել թէ մի-
ջազգային Դատարանին վճիռը սաստիկ յուզ-
ման մէջ ձգելու է Նուսրար փաշայի նախա-
արարութիւնը: Կառավարական ակտիւնը մէջ
կըսուի թէ, այս վճռոյ վրայ, Կանոնաւոր
վարչութիւն անհնար կը լինի: Բնիկ սաշ-
տոնատարք ոչ եւս պիտի գործադրեն կեդ-
րոնական վարչութեան հրահանգներն, ա-
ռանց նախնապէս քննելու թէ այդ հրա-
հանգը համաձայն են պարտուց յարգարման
օրէնքին:

— Հնդկաստանի նոր Փոխարքայ Լորտ
Տըֆրին դեկտ. 1/13ին Կալկաթա հասաւ և
յոյժ փայլուն ընդունելութիւն մը գտաւ
ժողովրդեան ամեն դասուց և սաշտոնական
մարմնոց կողմէ:

— Յրանսայի երեսփոխանաց ժողովն և
ծերակոյտն համաձայնեցան ծերակոյտի կազ-
մութեան և ընտրութեան նոր եղանակին
վրայ, և քուէարկեցին նոր օրէնք մը, որով
ոչ միայն վերջ կը գտնէ նախարարական փո-
փոխման ամեն երկիւղ, այլ նաեւ Պ. Ժ.
Ֆէրրիի նախարարութիւնը ձեռք կը բերէ
նոր յաղթանակ մը, ըստ որում սոյն օրէն-
քին ընդունելութեամբ կը փակուի Սահմա-
նադրութեան վերադարձնական հրատապ խըն-
դիրն որ վերջին ամսոց մէջ այնչափ զբաղե-
ցուց հանրային կարծիքն:

— Եւրոպական լրագիրք հրատարակեցին
այն դաշնագիր որ կնքուած է գերմանական
Կայսրութեան և Քոնկոյի Միջազգային ըն-
կերակցութեան միջեւ, որով Գերմանիա կը
ձանձէ զայս մարմին իբրեւ անկախ Պետու-
թիւն մը, և ի փոխարէն իրաւունքներ կըս-
տանայ գերմանական հպատակաց համար,
ազատօրէն նաւարկելու Քանկոյի ջուրց մէջ:

— Դաւրէժէն նոյեմբեր 3 թուականաւ
Աբե-է-ժի ուղղեալ թղթակցութիւն մը կը
պատմէ այն քստմնելի եղերնագործութիւն,
որոյ ենթակայ եղած են Պարսկաստանի

սահմանադրի վրայ Գարատաղ նահանգի
Քէյվան գաւառակի ինն գիւղի հայ բնա-
կիւններ: Այդ գիւղեր ասկէ առաջ Չէլէպ-
եան կոչուած Խաներու իշխանութեան ներ-
քեւ կը գտնուէին: Այլ Պարսից շահն, ի-
մանալով Խաներու ի գործ դրած հարստա-
հարութիւնքը, այդ ինն գիւղերը կը յանձ-
նէ Դաւրէժի Արտաքին գործոց նախարա-
րութեան սաշտոնեայ Սաիտ-իւլ-Միւթին
Խաներն, զայրացած այս բանէն, առիթ կը
փնտռէին վրէժ լուծելու թշուառ գիւղա-
ցիներէն. ուստի, Սաիտ-իւլ-Միւթի թու-
լութենէն օգուտ քաղելով, անցեալ հոկ-
տեմբեր ամսոյ սկիզբներն, մօտ 500 ձիա-
ւորով, կը յարձակին գիւղերու վրայ և կ'ըս-
կըսին թալէլ, վիրաւորել ու սպաննել. նոյն-
պէս ամեն կերպ խռովութիւն ի գործ կը
դնեն կանանց ու մանկամարդ աղջկանց վը-
րայ: Գիւղացիներն երկրորդ օր Ռուաց կող-
մը Շուշի քաղաքը կը փախչին: Այժմ Ա-
տրպատականի առաջնորդ Գեր. Տ. Թա-
դէոս եպիսկոպոս, հեռագրած լինելով Շա-
հին, ասպնովութիւն կը խնդրէ բնակիչները
վերադարձնելու համար: Պարսից կառավա-
րութիւնը խոստացած է պատժել յանցա-
ւորները:

Ն Ե Ր Ք Ի Ն

Արտաքին գործոց նախարարի խորհրդ-
դական Տատեան Վսեմ. Յարութիւն էֆէն-
տի բարձրագոյն հրամանաւ հրաժարեցաւ
լուր սաշտոնէն: Յաջորդն ընտրուած չէ դեռ:

Յիշեալ նախարարութեան խորհրդականի
օգնական Չայեան Իլիաս էֆէնտի եւս հը-
րաժարեցաւ, և նորա յաջորդ ընտրեցաւ
Մուսթաֆա Րէշիտ պէյ:

— Միւթէմայիլի աստիճան տրուեցաւ
Բաղաքապետութեան վարչական խորհրդոյ
անդամ Բաղադեան Նշան էֆէնտի:

— Նախարարաց խորհուրդը վաւելա-
ցուց առողջապահական խորհրդոյ վերջին
տնօրինութիւններն ի մասին քարանձիւայ-
ներու բարձման:

— Պոլսոյ պատժակալ աստեանն 30 ոսկի
սուգանաց և երեք ամիս բանտարկութեան
դատաւարտեց սեղանաւոր Գուլաղարդեան
Մարգար էֆէնտին, որ հակառակ կառա-

վարական արդեւքին երկաթուղեաց արժէթղթեր կը վաճառէր, առանց արտօնութեան : Մարգար Էֆէնտի դատարանին ներկայացած չլինելով, այս վճիռը տրուեցաւ ի բացակայութեան :

— Մայաքաղաքս գտնուող Ֆրանսացի հրապարակագիր Պ. Տը լա Ժանքիէրն Օսմանեան հողէն հեռացնելու հրաման եղած է, Կայսերական կառավարութեան դէմ զրպարտիչ հրատարակութիւններ ըրած լինելուն պատճառաւ :

Ա Ձ Գ Ս Յ Ի Ն

Զորեքշարթի օրը Խառն ժողովն ի նիստ գումարուելով Պատրիարքարանի մէջ, միաձայնութեամբ պատրիարքական Տեղապահ անուանեց զԳեր. Տ. Տ. Գէորգ Ծ. Վ. Ռուսձուքեան, և անմիջապէս հաշտութեան պատրաստուելով և ստորագրուելով բոլոր ժողովականներէն, Բ. Գուռը զրկուեցաւ : Կիւմանամբ թէ դատական գործոց Նախարարն յիշեալ հաշտութեան իւր պաշտօնագրով Մեծ Եպարքոսին յղած է՝ Վեհ. Սուլթանին հաստատութեանը ներկայացնելու համար :

— Խառն ժողովը նոյն աւուր նստին մէջ իւր երկու ներկայացուցչաց բերնէն դոհուութեամբ լսեց թէ Ատենապետաց Դիւանն սկզբամբ ընդունել է Երուսաղէմի պարտուց բարձման համար զինուորական տրոց վրայ յաւելում մ'ընելու առաջարկն : Յետ ինչ ինչ տնօրինութեանց, Քաղաքական ժողովն առանձնանալով զբաղեցաւ Կեդրոնական վարժարանի բացման խնդրովն, խորհրդակցեցաւ «Ներսէս վարժապետեան Աւսումնարան»ի Ընկ. Գործ. Ժողովոյ հետ, և տեղեկանալով որ յիշեալ ընկերութիւնը կըստանձնէ նաեւ Ազգ. Կեդրոնական վարժարանի բացումն ստանձնելու հոգին, նոյնութեամբ հաստատեց ընկերութեան հիմնական յայտագիծն, և յանձնաժողով մը կարգեց պաշտօն տալով անոր քննել Կեդրոնական վարժարանի համար 1882 ի հանդանակող Մարմնոյն կողմէ յառաջագոյն մատուցեալ ծրագիրն, ի հարկին բարեփոխել զայն և տեղեկագիր մը մատուցանել Քաղաքական ժողովոյ :

— Յաւօք կը տեղեկանամք թէ Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Եսայի Ս. Պատրիարք Հայրն ծանրապէս հիւանդ է :

ՎՐԻՊԱԿ

Նախորդ շաբաթուոյն Մասիսի մէջ «Ծուլստան» դիւղը փոխանակ «Վանայ» մէջ ըսուելու, «Մուշի մէջ ըսուած է :

ՎԵՐՋԻՆ ՀԵՌՄԱՆՈՒՐԲ

ՅԲԱՆՔՕ-ԶԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Փարիզ, 18 դեկտ.

Թոնքինի Ֆրանսական զօրաց հրամանատար Պրիէր տը Լիլ զօրավարին երեկուան թուով մէկ հեռագիրը կը ծանուցանէ թէ երեք հազար Զինացիք Շիւի չըջակայները գիւղի մը վրայ յարձակեր են և թէ այս վերջին բերդաքաղաքին սլահապան զօրքերն յարձակումն յետո մղեր են՝ մեծ վնասներ պատճառելով : Ֆրանսացիք 24 մեռեալ ու վիրաւոր ունեցեր են :

ԲՈՐԹՈՒԿԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԻՍ

Լիզսոնա, 17 դեկտ.

Զրոյց կը պտտի թէ Բորթուկալ Գերմանիոյ տուեր է Լակոպի ծովախորը (Ափրիկէի արեւելեան եզերքը) :

Փարիզ, 18 դեկտեմբեր

Լոնտրայէն հեռագիր մը անհիմն կը յայտարարէ այն զրոյց որոյ համեմատ Բորթուկալ Գերմանիոյ տուեր է Լակոպի ծովախորը :

ԹՂԹԱՎԱՃԱՌ ԵՒ ԴՐԱՎԱՃԱՌ

Զ. ԹՈՐՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պէլէ, Դեմ. Դաւիթ Կարէ, Բէ- 46

Սոյն վաճառատունն որ մեծ փոփոխութիւն կրած է այժմ և ընդարձակուած, պատիւ ունի ծանուցանել իւր յաճախորդաց աստ և ի դաւառս թէ պատրաստ է ամէն լեզուով գրքեանք, աշխարհացոյցք և ամէն տեսակ թղթեղէնք տալ աժան գներով :

Եւրոպական հետաքրքրաշարժ պատկերներ. դպրոցական և դժագր. պիտոյք և Գաղամիա 1885 տարւոյ :

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ